


Ա. Ա. ՄԱՏԹԵԿՆՈՍՅԱՆ

ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՄԻ
ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Z U B E S Z R A S

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА



Ա. Ա. ՄԱՏԹԵՎՈՍՅԱՆ

633.36

Մ-33

ՄՏՈՒԳԼԱՅ Է 1961

ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՄԻ
ԲԵՐԳԱՏՎՈՒԹՅԱՆ
ԲԱՐՋՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ



18287

А. А. МАТЕВОСЯН

**Пути поднятия урожайности
семян эспарцета**

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1947 г.



18581

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սոցիալիստական երկրագործության մեջ խոտաբույսերի մշակությունն ունի կարևոր և վճռական նշանակություն: Այդ է պատճառը, որ ՍՍՌՄ Մինիստրների Սովետը, հատուկ նշանակություն տալով կոլխոզներում և սովխոզներում խոտացանության ընդարձակման և բազմամյա խոտաբույսերի բերքատվության բարձրացմանը, 1946 թ. մայիսի 10-ին ընդունեց համապատասխան որոշում, որի մեջ նշված է, որ «կոլխոզներում և սովխոզներում խոտացանությունը, որը բացառիկ կարևոր նշանակություն ունի՝ հողի բերրիությունը բարձրացնելու, գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունն ավելացնելու և անասնաբուծության համար կերի ամուր բազա ստեղծելու գործում գտնվում է անբավարար վիճակում»: Հետևապես, մեր հիմնական խնդիրն է ամեն կերպ ընդարձակել խոտացանությունը, և այդ է պատճառը, որ ստալինյան չորրորդ հնգամյակում մեր ռեսպուբլիկայի կոլխոզներում նախատեսվում է բազմամյա խոտաբույսերի ցանքային տարածությունն այժմյան 30,000 հեկտարից հասցնել 90,000 հեկտարի:

ՀՍՄՌ լեռնային և նախալեռնային շրջաններում մշակվող բազմամյա խոտաբույսերից հիմնականը, լաջն հեռանկար ունեցողը, հանդիսանում է կորնզանը:

Բազմահար կորնզանների առավելությունները երկրագործության մեջ խոշոր են. կորնզանը տալիս է լավորակ խոտի բարձր բերք (միջին հաշվով հեկտարից

45—60 ցենտն. չոր (սոտ) և բարձրացնում է հողի բեր-
րիությունը: Կորնգանը, շնորհիվ իր արժատների վրա
աճող հատուկ բակտերիաների, հողում կուտակում է մեծ
քանակութամբ՝ հեկտարին 1,7-2,0 ցենտներ ազոտ, որը
համարվել է մեկ տոննա ամոնիում սուլֆատ հանքային
պարարտանյութի, իսկ դա նշանակում է յուրաքանչյուր
տարի մեր կոլխոզների դաշտերը պարարտացնել 40,000
տոննա ազոտական պարարտանյութերով:

Կորնգանի նշանակությունն էլ ավելի մեծ է մեր
ռեսպուբլիկայի լեռնային և նախալեռնային պայմաննե-
րում, որովհետև ունի բարձր չորադիմացկունություն և
ձմռադիմացկունություն, լավ աճում և բարձր բերք է
տալիս նաև սակավազոր ու քարքարոտ հողերում:

Ահա այդ հատկությունների շնորհիվ է, որ կորն-
գանը նշված պայմաններում իրավացիորեն մտցվում է
խոտադաշտային ցանքաշրջանառության մեջ ու տարեց-
տարի ընդարձակվում է նրա ցանքային տարածություն-
ները:

Սակայն, չնայած նշված բոլոր առավելություննե-
րին, կորնգանի մշակութունն ինչպես մեզ մոտ, այնպես
էլ Սովետական Միության հարավային շրջաններում, շատ
սահմանափակ է. իսկ դրա հիմնական պատճառը հանդի-
սանում է այդ կարևոր կուլտուրայի սերմի խիստ պա-
կասը:

Մինչև որ տեղում չունենանք կորնգանից ստացվող
սերմի անհրաժեշտ պաշար, մեզ մոտ հնարավոր չէ կլի-
րառել դյուղատնտեսական կուլտուրաների բերքավու-
թյան բարձրացման հիմնական միջոցառում հանդիսացող
ցանքաշրջանառությունը:

Ինչպես ողջ Միության մեջ, նույնպես և Հայաս-
տանում բազմամյա խոտաբույսերի, այդ թվում կորն-

զանի ցոնքային տարածություններն ընդարձակելու և
այն անհրաժեշտ սերմացվով ապահովելու նպատակով,
ՍՍՌ Միութեան Մինիստրների Սովետը կոլխոզներում և
սովխոզներում խոտացանության ընդարձակման վերա-
բերյալ իր պատմական որոշմամբ պարտավորեցնում է,
որ «սկսած 1947 թվից յուրաքանչյուր կոլխոզ պետք է
պարտադիր կարգով կատարի բազմամյա խոտաբույսերի
ցանք և իրեն ապահովի խոտաբույսերի սեփական սեր-
մերով՝ նրանց համար հաստատված պետական պլաննե-
րին համապատասխան»:

Որպեսզի մեր կոլխոզները կարողանան ժամանակին
և բարձր ցուցանիշներով կատարել խոտացանության
ընդարձակմանը վերաբերող կառավարութան այդ կա-
րևոր առաջադրանքը, անհրաժեշտ է լրիվ և ճշտությամբ
կիրառել այդ կուլտուրաների մշակման, սերմի բարձր
բերքի ստացման հիմնական ագրո-միջոցառումները:

Մեր այս աշխատության նպատակն է առաջարկել
ագրոտեխնիկայի այնպիսի սխեման, որի կիրառմամբ հը-
նարավոր լինի ստանալ կորնզանի սերմի մաքսիմում բերք:

Հայաստանի տարբեր հողակլիմայական պայմաննե-
րում կատարած մեր երկարամյա ու բազմակողմանի փոր-
ձերը և ուսումնասիրությունները մեզ հնարավորու-
թյուն են տալիս առաջարկել այն միջոցառումները, ո-
րոնց կիրառմամբ կբարձրացվի բազմահար կորնզանի
սերմարտադրողականութունը:

Նախքան կորնզանի սերմի բերքատվության բարձ-
րացման միջոցառումների նշելը, անհրաժեշտ է համառոտ
կերպով ծանոթանալ Հայաստանի պայմաններում մշակ-
վող կորնզանի տեսակների և ձևերի ագրոբիոլոգիական
հատկանիշների հետ:

Սովետական Հայաստանում տարածված են կորրեկցանքների երկու տեսակները՝ տեղական բազմահար կորրեկցան և միահար ուղղայնական կորրեկցան։ Այդ երկու տեսակներից առաջնությունը պետք է տալ տեղական բազմահար կորրեկցանին, որը դարեր շարունակ մշակվել է մեր հողակլիմայական ուրույն պայմաններում ու ձեռք բերել մի շարք արժեքավոր հատկանիշեր, այն է.

1. Ցանքի առաջին տարում ծաղկում և նպաստավոր պայմաններում տալիս է նույն տարում 20-40 ցենտներ չոր խոտ, մինչդեռ ուղղայնական կորրեկցանն առաջին տարին ցողուն չի տալիս։

2. Ցանքի երկրորդ և հետագա տարիներին հնձվում է 2-3 անգամ, մինչդեռ ուղղայնական կորրեկցանը հրնձրվում է միայն ու միայն մեկ անգամ։

.. 3. Ավելի երաշտադիմացկուն է։

4. Ունի ինչպես խոտի, նույնպես էլ սերմի բարձր բերքատվություն, տալով հեկտարից ջրովի պայմաններում 100-120 ցենտներ, անջրդի պայմաններում՝ 60-70 ցենտներ չոր խոտ, մինչդեռ ուղղայնական կորրեկցանը տալիս է 25-30 ցենտներ չոր խոտ։

5. Տալիս է ավելի որակյալ կեր։

6. Ավելի շատ չոր նյութ է կուտակում հողի վարելաշերտում, հետևապես ավելի լավ է բարձրացնում հողորդող կուլտուրաների բերքատվությունը։

Մեզ մոտ տեղական բազմամահար կորրեկցանների չափազանց արժեքավոր ձևեր գոյություն ունեն, որոնք աչքի են ընկնում իրենց բարձր արտադրողականությամբ։ Այդ ձևերից-էկստրիպերից հայանի են Սիսիանի, Թալինի, Մարտունու և Դարալագյազի ձևերը, որոնցից յուրա-

Քանչյուրն առանձին-առանձին ավելի լավ է հարմար-ված այս կամ այն պայմաններին:

Անհրաժեշտ է արագ թափով բազմացնել ահա հենց այդ տեղական բազմահար կորնգանների էկստրպերը-ձևերը, որովհետև նրանց նշանալիությունը մեծ է նաև մեր ռեսպուբլիկայից դուրս՝ Սովետական Միության հարավային չոր շրջանների համար:

Կորնգանի սերմի բերքը կախված է ագրոտեխնիկական կոմպլեքս միջոցառումների ճիշտ կիրառումից, այն է՝ ցանքի ձևից, հարի ճիշտ ընտրությունից, տարիքից, մեղոնների առկայությունից, խնամքից և այլն:

Նշենք այդ խնդիրներն առանձին-առանձին:

ԲՈՒՅՍՅԵՐԻ ՍՆՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՄԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Կորնգանի սերմի բերքատվությունը կախված է ցանքի խտությունից, կամ ինչպես ընդունված է անվանել՝ բույսերի սնման մակերեսից: Այս հարցի վերաբերյալ մասնագետների մեջ գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Մասնագետների որոշ մասը գտնում է, որ սերմի բարձր բերք ստանալու համար պետք է ցանել լայնաշարք ձևով, իսկ որոշ մասը՝ նեղ շարքերով:

Կորնգանի ծաղկման, սերմի հասունացման և հատկապես հասունացած ոերվերի թափվելու վերաբերյալ մեր բազմաթիվ տարիների (1932—1938 թ.թ.) դիտողություններից պարզվում է, որ բազմահար կորնգանի միահամուռ ծաղկումը տեղի է ունենում նորմալ խտություն ունեցող դաշտերում: Կորնգանի նոսրացած դաշտերում ծաղկման ժամանակաշրջանը շատ երկարում է, որովհետև թե՛ բույսերի թփակալման պրոցեսն է ձգձգվում և թե՛ ցողունի վերևի տերևածոցներից անընդհատ նոր ճյուղեր

են անուամբ ու ողկուղիներ տալիս: Ե՛րբ, ուսումնասիրում ենք կորնգանի հասունացած սերմերի թափվելու աստիճանը, պարզվում է, որ ոչ նորմալ խտություն ունեցող, ախինքն, նոսր դաշտերում նրա չափը բավականին մեծ է լինում, քան նորմալ խտություն ունեցող դաշտերում: Կորնգանի հասունացած սերմերի թափվելու երևույթի դեմ պայքարի ռացիոնալ միջոցների մշակումը դառնում է առանձնապես ակտուալ: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է պարզել թե բազմահար կորնգանի համար պահանջվող սնման մակերեսը մաքսիմում քանակությամբ խոտ ստանալն ապահովելուց բացի ապահովում է արդյոք նաև մաքսիմում քանակությամբ սերմ ստանալը, թե ոչ:

Այդ խնդիրը պարզելու նպատակով Ախտայի, Սիսիանի, Մարտունու և մի քանի այլ շրջաններում կատարել ենք տարբեր միջաբեռային (10-11 սանտիմետր, 20-22 սմ., 30-33 սմ., 40-44 սմ., 50-55 սմ. և 60-66 սմ.) հեռավորությամբ կորնգանի ցանք: Այդ փորձերի դիտողություններից ու ստացած տվյալներից պարզվում է հետևյալը (տես աղյուսակ № 1):

1. Նեղ շարքերով ցանված ցանքերում մեկ քառակուսի մետրի վրա ծաղիկների թիվը ավելի մեծ է (37-60 հազար), քան թե 50-55 սմ. լայնաշարք ցանքերում (17-20 հազար):

Սնման տարբեր մակերեսի պայմաններում ծաղիման տեղությունը տարբեր է լինում: Նեղ համատարած շարքերով կատարված ցանքերում ամբողջ դաշտում ծաղկումը տեղի է ունենում միջին հաշվով 13 օրվա ընթացքում: Մինչդեռ լայնաշարք (50-55 սմ. հեռավորությամբ) ցանքերում՝ 28 օրվա ընթացքում, հետևյալից առաջին դեպքում ծաղիկների փոշոտումը տեղի

Ամեն մակերեսի աղյուսակներ բաղմամբ կոնցանի սերմի բերանալուրյան վա

№	Միջանկախ փորձարկում	Միջանկախ փորձարկում	Միջանկախ փորձարկում	Միջանկախ փորձարկում	Միջանկախ փորձարկում	Միջանկախ փորձարկում	Միջանկախ փորձարկում	Միջանկախ փորձարկում	Միջանկախ փորձարկում	Միջանկախ փորձարկում	Միջանկախ փորձարկում	Օգտագործված երկրորդ տարի		
												Սերմերի քանակը	9/5	0/0
1	10—11	—	200—230	37—60 հազար	23/6	6/7	13	9/7	2	12/7	9/7	312	11,3	159
2	40—22	—	100—125	20—32 հազար	23/6	8/7	15	12/7	2	15/7	9,9	121	8,2	115
3	30—33	Քաղհան	70—80	12—22 հազար	23/6	1/7	18	16/7	3	19/7	7,3	116	8,0	112
4	40—44	Քաղհան կաշվապահ	50—60	17—22 հազար	27/6	17/7	24	21/7	8	29/7	6,5	100	7,4	104
5	50—55	Քաղհան կաշվապահ	40—50	17—20 հազար	27/6	21/7	28	25/7	13	7/8	6,5	100	7,1	100

Քվերը ցույց են տալիս՝
1. Մեկ քաղաղալիսի մեծարի վա քույրերի քանակը նեղ շարքերով (10-11 սմ.), ուրիշ խուզով համապարտ շարքերով ցանկած ցանքերում 5-6 անգամ ավելի է, քան լայնաշարք (50-55 սմ.) ցանքերում:

2. Մեկ ք. մ. տարածություն վրա քաղաղալիսի կորնզանի ծաղիկների քանակը համապարտ շարքերով ցանկած ցանքերում 2-3 անգամ ավելի է, քան այն ցանքերում, որտեղ կորնզանը ցանկած է լայնաշարք (50-55 սմ.) ձևով:

էւնենում 13 օրվա ընթացքում, իսկ երկրորդ դեպքում 23 օրվա ընթացքում: Ի՞նչն է այստեղ պատճառը: Ինչո՞ւ նեղ շարքերով (10-11 սմ.) ցանքի դեպքում ծաղկումը կատարվում է միահամուռ և ավելի կարճ ժամանակամիջոցում: Այդ պետք է բացատրել նրանով, որ նեղ համատարած շարքերով ցանքի դեպքում կորնգանի ծաղիկները հիմնականում գուցե և ամբողջությամբ գտնվում են միևնույն բարձրության վրա (յարուսում), իսկ դահեռանք է նրան, որ այդպիսի ցանքի դեպքում ծաղկափթթությունները դուրս են գալիս ցողունի գագաթի 3—4 տերևածոցերից: Լայնաշարք (50-55 սմ.) ցանքերում ծաղկափթթությունները (ծաղիկները) գտնվում են տարբեր շարունակներում: Թփակալման հանգույցից ուշ դուրս եկող ցողուններն ավելի կարճ են լինում: Մնման մեծ մակերեսի պայմաններում հիմնական ցողունները ավելի շատ են ճյուղավորվում: Նոր ճյուղերից առաջացած ծաղկափթթությունները գտնվում են ավելի ցածր շարունակում: Ինչպես թփակալման հանգույցից ուշ դուրս եկած ցողունների, այնպես էլ հիմնական ցողունների ճյուղավորումից առաջացած ծաղկափթթությունների ծաղիկներն ավելի ուշ են ծաղկում, այդ պատճառով էլ ծաղկման տևողությունը լայնաշարք ցանքերում ավելի ձգձգվում և երկար ժամանակ է տևում:

2. Մնման տարբեր մակերեսի պայմաններում սերմերի հասունացման տևողությունն էլ տարբեր է լինում: Նեղ շարքերով ցանքի դեպքում հասունացումը կատարվում է 2-3 օրվա ընթացքում, իսկ լայնաշարք ցանքերում հասունացումը ձգձգվում և կատարվում է 13 օրվա ընթացքում: Ահա այդ բոլորի հետևանքով էլ կորնգանիների դաշտում սերմի բերքահավաքի ժամանակ հասունացած սերմերի մի մասը թափվում է և տեղի է

ռւնհնում բավականին մեծ կորուստ: Կորնգանի սերմերի կորուստի չափը տարբեր ձևի ցանքերում տարբեր է լինում: Նեղաշարք ցանքերում ծաղիկները մեկ լարուսում գտնվելու շնորհիվ, ծաղկման, ծաղիկների փոշոտման և սերմերի հասունացման տևողությունը կարճ լինելու հետևանքով սերմի կորուստն էլ մինիմումի է հասնում, կամ իսպառ վերացվում է: Լայնաշարք (50-55 սմ.) ցանքերում ծաղիկները տարբեր յարուսում գտնվելու հետևանքով ծաղկման, ծաղիկների փոշոտման և սերմերի հասունացման տևողությունը ձգձգված, երկար լինելու հետևանքով սերմի կորուստը մեծ չափերի է հասնում:

3. Կորնգանի սերմադաշտում պետք է ստեղծել ալյուպիսի պայմաններ, որի շնորհիվ ծաղկումը չձգձգվի, այլ կատարվի կարճ ժամանակամիջոցում: Այդպիսի պայմաններ ստեղծելով նախօրոք կանխում ենք հասունացած սերմերի թափվելը, որի հասցրած վնասը զգալի է լինում: Այդպիսի պայմաններ մենք ստեղծում ենք կորնգանը նեղ շարքերով (10-11 սմ.) ցանելու միջոցով:

4. Մնման տարբեր մակերեսի պայմաններում բազմահար կորնգանների սերմի բերքն ինչպես օգտագործման առաջին, այնպես էլ օգտագործման երկրորդ տարում տարբեր է: Սերմի բերքատվությունը նեղ շարքերով ցանված դաշտերում բարձր է, լայն շարքերով ցանված դաշտերում ցածր է: Այսպես, օրինակի համար, եթե լայն շարքերով (50-55 սմ.) ցանված դաշտերից օգտագործման առաջին տարում մեկ հեկտարից ստացված 6,5 ցենտներ սերմի բերքն ընդունենք 100, ապա նեղ շարքերով (10-11 սմ.) ցանված դաշտերից ստացվում է $49\frac{0}{10}$ -ով ավելի սերմ: Ստացված սերմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նեղաշարք ցանքերից ստացված կորնգանի սերմերն իրենց աբսոլյուտ

քաշով և մեծութեամբ միատարր են, պտղաթաղանթը բարակ, թույլ զինված, ցանելիս տալիս են հասերաշին ծլում և ծլման էներգիան էլ բավականին բարձր է (տես աղյուսակ № 2)։

Աղյուսակ № 2

Սնման մակերեսի ազդեցությունը բազմաճառ կորեզանի սեմի որակի վրա (օգտագործման առաջին տարի)

№ №	Միջնաբային տարածութիւն ս. մ.	Բերքը ց/հ	1000 ունդի արմ. քաշը զրամներով	Պարզաթանթի շօլ	Մեկ կիլոգրամում ունդերի քանակը	Ծլունակութիւնը	
						0/0	Ծլման էներգիան
1	10—11 սմ.	9,7	21,7	25,3	48200	81,3	6-8 օրում
2	50—55 սմ.	6,5	23,6	30,5	40100	80,7	6-14 օրում

Նշված փորձնական ավյալներից պարզվում է, որ լայնաշարք 50-55 սմ. միջնաբային տարածութեամբ ցանքերից բազմաճառ կորեզանը ոչ միայն 49,2⁰/₀-ով ավելի քիչ սերմի բերք է տալիս, այլ և ստացված սերմերը իրենց մեծութեամբ խայտաբղետ են, կան շատ խոշոր, կան հակառակը շատ մանր սերմեր։ Այդ հետևանք է նրան, որ նեղաշարք ցանքերի դեպքում սերմերը զրտնվում են հիմնականում մեկ յարուստում։ Մինչդեռ լայնաշարքերի մոտ նրանք առաջանում են տարբեր յարուստներում։ Ընդհանրապես, 1000 ունդի արտուրտ քաշը լայնաշարք ցանքերում ավելի մեծ է, քան նեղաշարք ցանքերից ստացված սերմերինը։ Հատիկների մեծութեան մեջ տարբերութիւնն գրեթե չկա։ Պտղաթաղանթը նե-

դաշարքերի մոտ կազմում է ընդհանուր քաշի 25,3⁰/₀-ը, այն ժամանակ, երբ լաջնաշարքերի մոտ կազմում է ընդհանուրի 30,5⁰/₀-ը: Այդ բոլորի հետևանքով նեղաշարք ցանքերից ստացված կորնզանը մեկ կիլոգրամում պարունակում է 48200 ունդ, իսկ լաջնաշարքից ստացածը՝ 40100 ունդ: Ուրիշ խոսքով լաջնաշարքից ստացված ունդերը խոշոր են, որի պատճառով էլ ցանքի նորման որոշելիս մենք այդ սերմերից մեկ հեկտարում նորմալ խրտություն ունեցող ցանք ստանալու համար ավելի շատ սերմ պետք է ցանենք, քան այն դեպքում, երբ սերմը ստացվել է նեղաշարք ցանքերից: Դա բացասական երեվույթ է. պետք է ձգտել ընդհանրապես կորնզանի սերմերը, պտուղները մանրացնել:

Սերմերի ծլունակության տոկոսի մեջ տարբերություն չենք նկատում, սակայն ծլման էներգիայի մեջ զգալի փոփոխություն կա: Աղյուսակից երևում է, որ այն դեպքում, երբ սերմերն ստացվել են նեղաշարք (10-11 սմ.) ցանքերից, ծլումը տևում է 6-8 օր, իսկ լաջնաշարք ցանքերից ստացված սերմերը ծլում են 6-14 օրում: Լաբորատոր պայմաններում պարզել ենք, որ ուշ են ծլում միայն շատ մանր սերմերը, սրտնց քանակը լաջնաշարք (50-55 սմ.) ցանքերից ստացված սերմերի մեջ ըզգալի է:

Լաջնաշարք և նեղաշարք ցանքերի սերմարտադրողության տարբերությունից բացի տարբեր հետազոտություն են թողնում դաշտի բերրիության և կորնզանից հետո ցանվող կուլտուրաների բերքատվության վրա: Մեր փորձերը ցույց տվին, որ թե լաջնաշարք և թե նեղաշարք կորնզանները երկու տարի օգտագործելուց հետո վարելիս, դաշտի 25 սմ. վարելաչերտում կուտակված էր չոր նյութի տար-

բեր քանակությունն Եղաշարքի դեպքում հեկտարում 69,3 ցենտ., իսկ լայնաշարքի դեպքում՝ 40,7 ցենտ. կամ նեղաշարքի դաշտում չորնյութերի կուտակումը 70,20%-ով բարձր է լայնաշարքի դաշտից (տես աղյուսակ № 3):

Աղյուսակ № 3

Կորնզանի սնման մակերեսի ազդեցությունը հաջորդող կուլտուրայի բերեացվության վրա

№ №	Միջշարքային տարածությունը ս. մ.	25 սմ. վարելաշերտում կուտակված չոր նյութերը ց/հ	Հաջորդող կուլտուրայի (զարնանացան ցորեն)		
			Բերքը		Մեկ ք.մ. մուլախոտերի թիվը
			ց/հ	0/0	
1	10—11	69,3	16,8	138,8	36
2	50—55	40,7	12,1	100	63

Աղյուսակից երևում է, որ նեղաշարք ցանքի դաշտում կորնզանի բույսերը ոչ միայն տալիս են վերերկրյա մեծ մասսա, այլ և հողում 25 ս. մ. վարելաշերտում կուտակում են նույնպես մեծ մասսա:

Շնորհիվ դրան տարբեր հետազոտություն ունին թե հաջորդող կուլտուրայի (զարնանացան ցորենի) բերքատվության և թե դաշտում մուլախոտերի քանակի վրա:

Այն դեպքում, երբ նախորդողը հանդիսացել է նեղ (10-11 սմ.) շարքերով կորնզանի ցանք, հաջորդող կուլտուրայի (զարնանացան ցորենի) բերքը 38,80%-ով ավելի բարձր է եղել, քան այն դեպքում, երբ նախորդողը եղել է լայնաշարք կորնզան: Զգալի տարբերություն կա նաև մուլախոտերով վարակվածության տեսակետից. լայնաշարքի դեպքում համարյա կրկնակի անգամ ավելի շատ, քան նեղաշարքի դեպքում:

Հայաստանում մշակվող տեղական կորնգանները բազմահար են: Լեռնային ու Նախալեռնային շրջաններում նրանք հնձվում են 2-3 անգամ: Հիմնական կորնգանացան շրջաններում սերմի համար թողնվում է տարեկան միայն մեկ անգամ: Անկախ այն հանգամանքից թե որ հարն է թողնվում սերմի համար արտադրությունում, մյուս հարը հնձվում է խոտի համար: Կորնգանի խոտի բերքը տարբեր ձևի ցանքի պայմաններում միանգամայն տարբեր է: Այն դեպքում, երբ օգտագործման առաջին և երկրորդ տարվա առաջին հարը սերմի համար ենք թողնում, այդ նույն տարիների երկրորդ հարը հնձում ենք խոտի համար: Մեկ հեկտարում չոր խոտի բերքը նեղ (10-11 սմ. միջշարքային տարածությամբ) ցանքերում, օգտագործման առաջին տարում, երկրորդ հարի ժամանակ հավասար է 27,2 ցենտների, իսկ երկրորդ տարում՝ 29,7 ցենտների: Ուրիշ խոսքով երկու տարվա ընթացքում այդ ցանքերի երկրորդ հարերից ստացվեց 56,9 ցենտներ չոր խոտ: Մեկ հեկտարում չոր խոտի բերքը լայնաշարք (50-55 սմ. միջշարքային տարածությամբ) ցանքերում այդ նույն տարիներում, այն է օգտագործման առաջին տարում, հավասար է 8,7 ցենտների, իսկ օգտագործման երկրորդ տարում՝ 10,1 ցենտների, ընդամենը՝ 18,8 ցենտ: Թվերը ցույց են առել, որ նեղաշարք ցանքերում երկու տարվա ընթացքում ստացվեց 302,4⁰/₀-ով ավելի շատ չոր խոտ, քան լայնաշարք ցանքերի դեպքում:

Ուսումնասիրելով ստացված խոտի որակը պարզվում է, որ լայնաշարք ցանքերում ոչ միայն երեք անգամ ավելի պակաս բերք է ստացվում քան նեղաշարք ցանքերից, այլ և խոտի որակն էլ շատ ցածր է: Մնման մեծ մասերեսի պայմաններում կորնգանի ցողունները կո-

պիտ են լինում, տերևներով աղքատ և մոխխոտերով հարուստ:

Ամփոփելով փորձերի արձաններն ու Հայաստանի կորնգանացան տարբեր շրջաններում արտադրական ցանքերում հարյուրավոր հեկտարների վրա կատարած բազմաթիվ աարիւնների մեր դիտողությունները հնարավոր է հանել հետևյալ եզրակացությունը:

Բազմամար կորնգանների սերմաբուծության համար, հատուկ լայնաշարք ցանք չպետք է ունենալ, որովհետև

1. Բույսերի քանակն այդպիսի ցանքերում մեկ միավոր տարածության վրա 5-6 անգամ, իսկ ծաղիկների քանակը 2-3 անգամ ավելի պակաս են քան նեղաշարք ցանքերում:

2. Ծաղկման տևողությունը և փոշոտումը ձգձգվում և տևում է 28-30 օր այն ժամանակ, երբ նեղաշարք ցանքերում վերջանում է 13 օրում:

3. Պտուղների-սերմերի հատունացումը ձգձգվում է, բերքահավաքի ժամանակ տեղի է ունենում հատունացած սերմերի մեծ կորուստ:

4. Սերմի բերքը 40-50⁰/₀-ով ավելի պակաս է լինում, քան նեղաշարք ցանքերում:

5. Մեկ հարը սերմի համար, իսկ մյուս հարը խոտի համար հնձելու դեպքում չոր խոտի բերքը լայնաշարք ցանքերում 3-4 անգամ ավելի պակաս է ստացվում, քան նեղաշարք ցանքերից:

6. Ստացված խոտը կուպտացած է, տերևներով աղքատ, պարունակում է 2 անգամ ավելի քիչ հում պրոտեյինյան նյութեր, քան նեղաշարք ցանքերից ստացված խոտը:

7. Դարմանը կուպիտ է, անասունները դրեթե չեն

տւտում, մինչդեռ նեղաշարք ցանքերից ստացված դարմանը հանդիսանում է լավ կեր:

8. Ստացված սերմը հարուստ է օլիսում պտղաթանթով. մեկ կիլոգրամ քաշում պարունակվում է 8-9 հազարով ավելի պակաս ունդ-սերմ, քան նեղաշարք ցանքերից ստացված սերմերը, որի պատճառով էլ լայնաշարք ցանքերից ստացված սերմացվի օգտագործման գեպըում ավելանում է ցանքի նորման 10-15 կիլոգրամով:

9. Ստացված սերմի ծլումը թե լաբորատոր և թե դաշտային պայմաններում ձգձգվում է:

10. Երեք տարվա ընթացքում մեկ հեկտար տարածության 0-25 սմ. վարելաչերտում կուտակվում է 28-30 ցենտներով ավելի պակաս չոր նյութ, քան նեղաշարք ցանքերում:

11. Հաջորդող կուլտուրայի (գարնանացան ցորենի) բերքը լայնաշարք կորնգաններից հետո 30-40% -ով ավելի պակաս է ստացվում, քան կորնգանների նեղաշարք ցանքից հետո:

12. Լայնաշարք կորնգաններից հետո հաջորդող կուլտուրայի դաշտում մոլախոտերի թիվն ավելի շատ է լինում, քան կորնգանի նեղաշարք ցանքերում:

Այս բոլորից եխելով, անհրաժեշտ է կորնգանի սերմաբուծությունը ռացիոնալ ձևով համատեղել կորնգանի այն դաշտերի հետ, որոնք ցանված են խոտ ստանալու համար: Այդ հնարավորություն է տալիս անտեսությանը վաղ գարնանից կորնգանների ցանքերի ընդարձակ տարածություններում սերմադաշտերի լայն ընտրություն կատարել: Միայն այն դաշտում է հնարավոր ստանալ կորնգանի սերմի բարձր բերք, որտեղ ստացվում



է խոտի բարձր բերք: Այդ պատճառով էլ սերմադաշտի համար պետք է ընտրել նորմալ խառություն ունեցող կորնգանի այն դաշտերը, լինի դա օգտագործման առաջին տարին թե երկրորդ, որոնք տալիս են կանաչ մասսայի մեծ բերք. ալգպիսի դաշտերում էլ միայն հնարավոր է ստանալ կորնգանի սերմի բարձր բերք:

Բազմահար կորնգանի սերմաբուծության նկատմամբ նման եզրակացության հիմնավորումը թերի կլինե՞ր, եթե մեր ձեռքի տակ փորձերի միջոցով չեւենեայինք նաև մի շարք խնդիրների ճիշտ լուծումը. այն է՝

1. Կորնգանի սերմի բերքի վրա ծածկոցը ինչպիսի ազդեցութիւն է թողնում:

2. Ծածկոց հանդիսացող կուլտուրայի ցանքի իւր-տութիւնն ինչպիսի ազդեցութիւն է թողնում եւթացանքս կորնգանի սերմի բերքի վրա:

3. Կորնգանի ցանքի խառութիւնն ինչպիսի ազդեցութիւն է թողնում սերմի բերքի վրա:

ԾԱԾԿՈՑԻ ԱԶԻԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՄԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Սոտաբույսերի սերմաբուծության խնդրում երկար ժամանակ գերիշխում էր այն միտքը, որ ծածկոցով ցանքը բացասաբար է աւելրադառնում բազմամյա կուլտուրաների սերմի բերքատվության վրա: Բազմաթիւ հետազոտողներ գտնում են, որ սերմ ստանալու համար բազմամյա խոտաբույսերն, այդ թիւում նաև կորնգանը, պետք է ցանել մաքուր վիճակում, առանց ծածկոցի, որովհետև ծածկոց հանդիսացող կուլտուրան իջեցնում է տվյալ

խոտաբույսի սերմի բերքատվությունն՝ ինչպես օգտագործման առաջին, այնպես էլ օգտագործման երկրորդ տարում: Մի խումբ այլ հետազոտողներ գտնում են, որ ծածկոցը չի իջեցնում ենթացանք հանդիսացող կուլտուրայի սերմի բերքատվությունը:

Մեզ մոտ, Հայաստանի տարբեր պայմաններում, բազմաժամ կորնգանի նկատմամբ, արտադրական ցանքերում ինչպես նաև կորնգանացան շրջաններում դրված հատուկ փորձերի միջոցով կատարված բազմաթիվ գիտողություններն համոզում են, որ ծածկոցով ցանքը չի իջեցնում նրա սերմի բերքատվությունը: Փորձերը կազմակերպել ենք Ախտայի շրջանի Ֆանտանում, Միսյանի շրջանի Բռնակոթում և Մարտունու շրջանի Գյուղաղարայում:

Ծածկոցի համար վերցրել ենք աշնանացան ցորեն, գարնանացան ցորեն, զարի, կտավհատ և հաճար: Փորձը դրվել է արտադրության պայմաններում: Փորձերի արդյունքները (տես աղյուսակ № 4) ցույց են տալիս, որ կորնգանի սերմի բերքատվության վրա ծածկոցներից գարնանացան հացաբույսերը՝ զարին, ցորենը, հաճարը գրեթե բացասական ոչ մի ազդեցություն չեն թողնում: Ենթացան կորնգանի սերմը նույնքան բերք է տալիս, որքան կոնտրոլը՝ առանց ծածկոցի ցանքը:

Հացաբույսերից աշնանացան ցորենի ծածկոցն իջեցնում է կորնգանի սերմի բերքը $3-6,40\%$: Այդ հետևանք է նրան, որ աշնանացան ցորենը կորնգանացան շատ վայրերում ավելի փարթամ է զարգանում և որոշ չափով ճնշում է ենթացանք արված կորնգանի բույսերին: Կտավհատը, որպես ծածկոց, բացասաբար է ազդում կորնգանի սերմի բերքատվության վրա, իջեցնելով սերմի բերքը $12,1-27,60\%$ -ով: Դիտողություններից պարզ-

Ճաբեր սետակ ծափոցի աղիցւոյւնը բազմամար իորեցանի սերմի բերի վրա
(Ճանցանի, Բոնակոյի և Գոյակոյաւայի փոշոնի միջոյնը)

		Ս ե ը թ ի բ ե ը բ ը ց/հ.																
№	Մասնակց հանդիսա- ցող կուլ- տուրան	Մասնակցի անունը և հասցեն	Մասնակցի անունը և հասցեն						Մասնակցի անունը և հասցեն									
			2-րդ տ.	3-րդ տ.	ձեռք բերելու արժեքը	%	2-րդ տ.	3-րդ տ.	ձեռք բերելու արժեքը	%	2-րդ տ.	3-րդ տ.	ձեռք բերելու արժեքը	%				
1	Կոնստանդնուպոլիսի առաջին ժամկետային կապիտալի հասցե	13,9	6,1	7,2	13,3	100	7,3	7,9	15,2	100	5,9	6,8	12,7	100	6,0	6,5	12,5	100
2	Ալեքսանդրապոլի հասցե	13,9	5,9	7,0	12,9	97	6,7	7,7	14,4	94,7	6,3	6,4	11,7	92,1	5,5	6,2	11,7	93,6
3	Գաբրիելա հասցե	8,7	6,2	7,3	13,5	101	7,0	8,3	15,3	100	6,0	7,0	13,8	102	5,9	6,6	12,5	100
4	Գաբրիելա հասցե	10,5	6,3	6,9	13,2	99	7,1	8,2	15,2	100	5,7	6,9	12,6	99	6,1	6,9	13,0	104
5	Կոնստանդնուպոլիսի հասցե	3,7	4,9	6,7	11,6	87,1	4,7	5,9	10,6	69	3,9	5,3	9,2	72	—	—	—	—
6	Համալսարանի հասցե	6,5	6,0	7,1	13,1	99	6,9	8,2	15,1	99	5,7	6,9	12,6	99	6,2	6,3	12,5	100

վում է, որ կտավհատի դեպքում ցանքի առաջին տարում կորնգանի դաշտը խիստ նոսրացված է լինում և այդպես շարունակվում է երկրորդ և երրորդ տարին: Ըստ երևույթին սկզբնական շրջանում կտավհատի խիտ ցանքը մի կողմից, նրա արմատների յուրացման բարձր աստիճանը մյուս կողմից վարելաշերտի վերին մասում ըստեղծում են ջրի պակասություն, որով և թուլանում են կորնգանի նոր, դեռևս չկազմակերպված բույսերը:

Աղյուսակից երևում է, որ կորնգանների սերմի համար նպատակահարմար է ցանել ծածկոցի տակ: Ծածկոցի համար անհրաժեշտ է վերցնել գաբնանացան հացաբույսերից դարին, հաճարը և ցորենը, որովհետև սրբանք համեմատաբար քիչ են թփակալվում, չեն պառկում, բարձր չեն և այլն: Ուսումնասիրելով ստացված սերմի որակական հատկանիշերը պարզվում է (տես աղյուսակ № 5) հետևյալ արդյունքը.

Աղյուսակ № 5

Ծածկոցի ազդեցությունը կորնգանի սերմի որակական հատկանիշերի վրա

№	Ծածկոցի տեսակը	Երկրորդ տարի առաջին հար			Երրորդ տարի առաջին հար			Ծանոթություն
		1 ք.մ. վրա մոլային քանակը	Սերմի մաքրութ. 0/10	Տնտեսակ. պիտանիու- թյունը	1 ք.մ. վրա մոլային քանակը	Սերմի մաքրութ. 0/10	Տնտեսակ. պիտանիու- թյունը	
1	Կոնտրոլ առանց ծածկոցի	59	83	59,7	87	72	51,8	Ծրանակությունը բոլոր դեպքերում էլ հավասար է 72,5%
2	Աշնանացան ցորեն	15	90	68,1	32	92	66,2	
3	Գարնանաց. ցորեն	18	95	68,4	33	91	65,5	
4	Գարնանաց. դարի	16	96,5	69,4	36	90	64,8	
5	Կտավհատ	13	96	68,1	39	93	66,9	
6	Հաճար	18	95	68,4	35	92	66,2	

Թվերը ցուլց են տալիս, որ ծածկոցի դեպքում կորն-
դանները: օգտագործման առաջին տարվա առաջին հարի
ժամանակ մեկ քառ. մետրի վրա մոլախոտերի քանակը
գրեթե երկու անգամ պակաս է, քան առանց ծածկոցի
կոնտրոլի դեպքում: Այդ պետք է բացատրել այն հանգա-
մանքով, որ ծածկոցի տակ մոլախոտերն իրենց հերթին
ճնշվում են և քիչ սերմ են տալիս, մինչդեռ առանց ծածկոցի
կորնդանի դաշտում ցանքի առաջին տարում ավյալ պալ-
մաններին ավելի հարմարված մոլախոտերը ժամանակին
ծաղկում, սերմ են տալիս, սերմերը հեշտությանը թափ-
վում են և վարակում դաշտը: Թվերը ցուլց են տալիս,
որ օգտագործման երկրորդ տարվա առաջին հարի սեր-
մադաշտերում մոլախոտերի թիվը մոտ երկու անգամ
ավելի շատ է, քան օգտագործման առաջին տարում: Այդ
նույն պայմաններում այն դաշտում, որտեղ կորնդանը
առանց ծածկոցի է ցանված մոլախոտերի թիվը երկու ան-
գամ ավելի է, քան այն դաշտերում, որտեղ կորնդանի
ցանքը կատարվում է որպես ենթացանք: Այդ երևույթը
նույնպես բացատրվում է նրանով, որ այն դեպքում, երբ
կորնդանի դաշտը մոլախոտերով վարակված է լինում և
այդ դաշտը թողնում ենք սերմի համար, այդ մոլախո-
տերի հիմնական մասի սերմերն ավելի շուտ են հասու-
նանում, թափվում են և հաջորդ տարվա սերմադաշտում
ավելի մեծ չափով են հանդես գալիս:

Թվերը ցուլց են տալիս նաև այն, որ կորնդանի
սերմերի մաքրության տոկոսը, ինչպես նաև տնտեսական
պիտանիության ⁰/₁₀-ը, ծածկոցի դեպքում ավելի բարձր
է, քան առանց ծածկոցի՝ կոնտրոլի դեպքում: Այս տե-

սակետից, դարձյալ նույն օրինաչափությունն է նկատ-
վում՝ օգտագործման առաջին տարվա սերմադաշտերում
այդ $0/6$ -ն ավելի բարձր է, քան երկրորդ տարվա սերմա-
դաշտերում: Աղյուսակից պետք է գալ այն եզրակացու-
թյան, որ կորնզանը զարնանացան հացաբույսերի տակ ցա-
նելիս, ոչ միայն սերմի բերքատվությունը չի իջնում, այլ և
ստացած սերմի որակը ավելի բարձր է լինում:

Ծածկոցի նշանակությունն այս խնդրում կայանում
է ոչ միայն նրանում, որ ցանքի առաջին տարում հողի
բերքից չզրկվելով ստանում ենք հատիկի բերք, այլ և
նրանում, որ ցանքի նման ձևի միջոցով պայքարում ենք
մոլախոտերի դեմ, ուստի կորնզանի սերմի որակն էլ
բարձր է լինում:

ԾԱԾԿՈՑ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՑԱՆՔԻ ԽՏՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԹԱՑԱՆՔ ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՄԻ ԲԵՐՔԻ ՎՐԱ

Հետազոտողներից մի քանիսը այն կարծիքն են
հայտնում, որ ծածկոցների տարբեր խտությունը տար-
բեր ձևով է ազդում հնթացանքի սերմի բերքատվության
վրա, որի հետևանքով էլ առաջարկում են ծածկոցի ցան-
քի նորման փոքրացնել: Մեր պայմաններում փորձերի
միջոցով պարզեցինք.

1. Ծածկոց հանդիսացող աշնանացան և զարնանա-
ցան ցորենի ցանքի նորմայի պակասեցումը հնթացանք
հանդիսացող կորնզանի սերմի բերքատվության վրա ոչ
մի ազդեցություն չի թողնում:

Այդ երևույթի հիմնական պատճառը նրանում է, որ
ծածկոցի ցանքի նորմայի իջեցման հետ զուգընթաց ա-
ճում է մեկ քառակուսի մեարում մոլախոտերի քանակը,

այսպէս օրինակ, օգտագործման առաջին տարուամ, այն դեպքում, երբ աշնանացան ցորենի ցանքի նորման հավասար էր 160 կիլոգրամի, մոլախոտերի թիվը հասնում էր 12-ի, իսկ 100 կիլոգրամի դեպքում, մոլախոտերի թիվը մեկ քառակուսի մետրում հավասար էր 32-ի:

2. Ծածկոց հանդիսացող աշնանացան և դարնանացան ցորենների ցանքի նորմայի պակասեցումը շատացնում է կորնզանի աղբոտվածութեան տոկոսը: Այսպէս օրինակ, օգտագործման երկրորդ տարում, այն դեպքում, երբ դարնանացան ցորենի ցանքի նորման հավասար էր 150 կիլոգրամի, կորնզանի սերմի մաքրութիւնը հասնում էր 92⁰/₀-ի, ցանքի նորման դարձնելով 110 կիլոգրամ, սերմի մաքրութիւնը իջնում, դառնում է 75,5⁰/₀:

3. Ծածկոցի ցանքի նորման իջեցնելիս ենթացանք կորնզանի սերմի տնտեսական պիտանիութիւնը խիստ կերպով վատանում է: Այսպէս օրինակ, օգտագործման երկրորդ տարում կորնզանի այն դաշտում, որտեղ ծածկոցի (դարնանացան ցորենի) ցանքի նորման վերցրել էինք 150 կիլոգրամ, կորնզանից ստացված սերմի տնտեսական պիտանիութիւնը հավասար էր 69⁰/₀-ի, իսկ այն դաշտում, որտեղ ծածկոցի ցանքի նորման վերցրել էինք 100 կիլոգրամ, կորնզանի սերմի տնտեսական պիտանիութիւնը հավասար էր 56,6⁰/₀-ի:

4. Ծածկոց հանդիսացող կուլտուրայի ցանքի նորման պակասեցնելիս, բնականաբար, ցանքի առաջին տարում ստանում ենք ծածկոցի ավելի պակաս բերք: Այս բոլորից ելնելով կորնզանի ծածկոց հանդիսացող կուլտուրաների ցանքի խտութիւնը մեր պայմաններում չպետք է իջեցնել:

ԿՈՐՆԳԱՆԻ ՅԱՆՔԻ ԽՏՈՒԹՅԱՆ (ՆՈՐՄԱՅԻ)
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐՄԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Սերմ ստանալու նպատակով ցանված կորնգանի սնման մակերեսի մասին խոսելիս եկանք այն եզրակացութիւն, որ ստացված սերմի քանակն ու որակը բարձր են այն դաշտերում, որտեղ ցանքը կատարվել էր համատարած նեղ (10-11 սանտիմետր) միջշարքային տարածութեամբ:

Այժմ մեր խնդիրն է պարզել թե այդ նույն համատարած նեղ (10-11 սմ.) միջշարքային տարածութեան պայմաններում արդյոք ցանքի նորման ինչպիսի ազդեցութիւն է թողնում կորնգանի սերմի բերքատուութեան վրա:

Մեր պայմաններում փորձերի միջոցով պարզեցինք, որ՝

1. Ցանքի տարբեր նորմայի դեպքում մեկ միավոր տարածութեան վրա կորնգանի բույսերի խտութիւնը տարբեր է լինում. որքան ցանքի նորման պակասեցնում ենք, այնքան քառակուսի մետր տարածութեւնում կորնգանի բույսերի թիւն էլ պակսում է: Այսպես օրինակ, 110 կիլոգրամի դեպքում բույսերի թիւը մեկ քառակուսի մետր տարածութեւնում հավասար է 220-ի, իսկ 50 կիլոգրամ ցանքի նորմայի դեպքում՝ 98-ի: Թփակումն ման աւտիճանը նոսր ցանքերում որոշ չափով բարձր է, սակայն մեր դիտողութիւններից պարզվում է, որ նոսր ցանքերի թփակումն երբեմն ստացվող բարձր աւտիճանը կոմպենսացիայի չի ենթարկում ծաղիկների քանակի բարձրացմանը, որի պատճառով էլ, որքան ցանքի նորման պակասեցնում ենք, այնքանով էլ մեկ միավոր տարածութեան վրա ծաղիկների թիւը պակսում է:

2. Հայտնի է, որ այս կամ այն կուլտուրայի բարձր սերմարտադրողականության հիմնական ֆակտորներից մեկն էլ ծաղիկների առատությունն է. որքան ծաղիկների թիվը մեկ միավոր տարածութեան վրա շատ է, այնքան էլ, նույնաման նպաստավոր պայմաններում, ստացված սերմի քանակն էլ շատ է: Այդ տեսակետից միանշանակ է, որ ցանքի նորման պակասեցնելիս պակսում է նաև սերմի բերքը: Այսպես, օրինակի համար, ցանքի 50 կիլոգրամ նորմայի դեպքում կորընդանի օգտագործման առաջին տարում մեկ հեկտարից ստացվեց 4,9 ցենտներ սերմ, իսկ օգտագործման երկրորդ տարում՝ 5 ցենտներ: Այդ նույն պայմաններում ցանքի 110 կիլոգրամ խտության դեպքում օգտագործման առաջին տարում ստացվեց 8,5 ցենտներ, իսկ օգտագործման երկրորդ տարում՝ 9,5 ցենտներ բերք: Եթե 50 կիլոգրամ ցանքի նորմայի պայմաններում ըստացված բերքը ընդունենք 100% , ապա որքան ցանքի նորման շատացնում ենք, այնքան էլ սերմի բերքն աճելանում է: Սերմի բերքատվության բարձրացումը շարունակ աճում է, հասնում է կարծես ինչ որ մաքսիմումի, որից հետո ընկնում է: Մաքսիմում չափով սերմի բերք է ստացվում ցանքի 110-120 կիլոգրամ նորմայի պայմաններում, որից հետո որքան ցանքի նորման շարունակում ենք շատացնել, այնքանով էլ սերմի բերքատվությունն ընկնում է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 120 կիլոգրամից ավելի սերմ ցանելիս, բույսերի սնման մակերեսը խիստ կերպով փոքրանում է, որի պայմաններում բույսը խոնավության և անոգանյութերի պակաս զգալով տալիս է ավելի քիչ բերք:

Թալինի էկստիպի ցանքերում սերմի մարսիմում բերք ստացվում է, երբ մեկ հեկտարին ցանում ենք 100-110 կիլոգրամ, որից հետո ցանքի նորման շատացնելու հետ զուգընթաց պակասում է սերմի բերքատվությունը: Թալինի էկստիպի այդ առանձնահատկությունն պատճառը նրա սերմերի համեմատաբար մանր լինելն է: Այդ էկստիպը մեկ կիլոգրամում պարունակում է 59200 ունդ-սերմ, մինչդեռ Սիսիանի էկստիպը՝ 49800 ունդ-սերմ:

3. Դաշտերի մոլախոտերով վարակվածության աստիճանը ցանքի տարբեր խտությունն պայմաններում տարբեր է. այդ տարբերությունը աչքի է ընկնում ոչ միայն օգտագործման առաջին տարում, այլ և դաշի չափով երկրորդ տարում: Որքան ցանքի նորման պակասեցնում ենք, այնքանով էլ մեկ քառակուսի մետր տարածության վրա մոլախոտերի թիվը շատանում է: Այսպես օրինակ, 50 կիլոգրամ ցանքի նորմայի պայմաններում մեկ քառակուսի մետրի վրա մոլախոտերի թիվը օգտագործման առաջին տարում հավասար է 30-ի, օգտագործման երկրորդ տարում 65-ի: Այդ նույն պայմաններում 110-120 կիլոգրամ ցանքի նորմայի դեպքում մոլախոտերի թիվը մեկ քառակուսի մետրում օգտագործման առաջին տարում հավասար է 16-17-ի, իսկ երկրորդ տարում 20-29-ի: Յանրի նսրման պակասեցնելիս մեծ բացույթներ են ստեղծվում, որոնք շատ կարճ ժամանակահատվածում ծածկվում են մոլախոտերով: Այդ մոմենտի վրա պետք է առանձնակի ուշադրություն դարձնել, քանի որ դաշտն ամեն տարի սերմի համար թողնելու դեպքում մոլախոտերի սերմերը շուտ հասունանալու և շուտ թափվելու հետևանքով խիստ վարակում են դաշտը մոլախոտով: Անշուշտ այդպիսի դաշտերում հաջորդող կուլտուրայի բերքատվությունն էլ կլինի ցածր:

4. Հայտնի է, որ մեզ մոտ մշակվող կորնգանները բազմահար են. հետևապես օգտագործման տարիներին տալիս են երկու հար, որից մեկը սովորաբար սերմի համար ենք թողնում, մյուսը՝ խոտի և ոտի բերքն այս դեպքում ևս մեծ չափով կախված է ցանքի նորմայից: Որքան ցանքի նորման փոքրացնում ենք, այնքան էլ ստացված խոտի բերքն էլ իջնում է, օրինակ՝ 50 կիլոգրամ ցանքի նորմայի դեպքում երկրորդ հարի հեկտարից ստացվում է 7 ցենտներ չոր խոտ, իսկ 110-120 կիլոգրամի դեպքում՝ 26,3-26,4 ցենտներ, կամ 375,7⁰/₀:

Հայտնի է, որ կորնգանի նոսր ցանքերում թիփակալումը ձգձգվում է տերևածոցերից դուրս են գալիս լըրացուցիչ նոր ճյուղեր, որի պատճառով էլ ծաղկման տևողությունը բավականին ձգձգվում է: Այսպես օրինակ, 50 կիլոգրամ ցանքի նորմայի դեպքում ծաղկումը տևում է 27 օր, իսկ 110-120 կիլոգրամ ցանքի նորմայի դեպքում 14-15 օր: Բնական է, որ այն դաշտերում, որտեղ ծաղկման տևողությունը երկարում է, հասունացման պրոցեսն էլ տևական է լինում, որի հետևանքով էլ բերքահավաքի ժամանակ հասունացած սերմերի զգալի մասը թափվում է և տեղիք տալիս մեծ կորստի:

Ուսումնասիրելով կորնգանի ցանքի տարբեր խտություն ունեցող դաշտերից ստացված սերմի որակական հատկանիշերը (աբսոլուտ քաշը, սերմերի մաքրությունը, տնտեսական պիտանիությունը և այլն) պարզվում է հետևյալը (տես աղյուսակ № 6):

Թվերը ցույց են տալիս՝

1. Ցանքի տարբեր խտության պայմաններում բացառված սերմի մաքրությունը տարբեր է լինում. նոսր ցանքերում պարունակվում են մոլախոտերի շատ սերմեր:

խիտ ցանքերի դեպքում կորնգանի սերմի մեջ մոլախոտերի թիվը մինիմումի է հասնում, օրինակ՝ 50 կիլոգրամ ցանքի նորմալի դեպքում մաքրությունը հավասար է 72-ի, իսկ 100-120 կիլոգրամի դեպքում՝ 96—96,5⁰/₀:

Աղյուսակ № 6

Ցանքի տարբեր խտության ազդեցությունը ստացված սերմի բերատվության և որակական հատկությունների վրա

№	№	Ց ա ն ք ի ն ո Ր մ ա ն կ ի լ ո գ Ր ա մ ն ե Ր ո Վ								
		50	70	80	90	100	110	120	130	150
1	Բերքատվությունը ց/հ	4,9	5,3	5,9	6,2	7,3	8,5	9,1	7,2	5,3
2	Մերմերի մաքրությունը ⁰ / ₀	72	76	79	81	89	96	96,5	96	96,7
3	Տնտեսական պիտանիությունը	52,5	55,4	57,6	59,1	64,9	70,0	70,3	70,0	70,4
4	1000 ունդի արտոլուտ բաշը գր.	23,1	22,8	22,5	22,8	21,8	21,1	20,5	20,1	20,2
5	1000 սերմի արտոլուտ բաշը գր.	15,3	15,2	15,5	15,7	15,7	15,3	14,9	15,1	15,9
6	Պտղաթաղանթի ⁰ / ₀ -ը	33,3	32,9	31,1	27,0	28,4	23,4	21,8	20,0	21,1
7	Մեկ կիլոգրամ ունդերի բաշակը	40200	42060	41900	43000	45700	48200	49000	50000	49000

2. Ցանքի տարբեր խտության պայմաններում ըստացված կորնգանի սերմի տնտեսական պիտանիությունը նույնպես տարբեր է. որքան կորնգանի ցանքը նոսր է,

այնքան էլ ստացված սերմի անտեսական պիտանիու-
նըն էլ ցածր է:

3. Յանքի տարրեր խտության պայմաններում ըս-
տացված սերմի աբսոլյուտ քաշը գրեթե նույնն է. նա
տատանվում է 14,9-17,5 գրամի շուրջը, սակայն դա չի
նշանակում, որ բույսերի սնման տարրեր մակերեսի
պայմաններում ստացվում է միևնույն մեծության և
նույն քաշ ունեցող սերմեր: Յանքի նորմալ (110-120
կիլոգրամի) խտության պայմաններում ծաղիկները,
գտնվելով միևնույն յարուսում, բացվում են արագ, սեր-
մերը ավելի կարճ ժամանակամիջոցում են հասունանում
և որովհետև նրանք գտնվում են միատեսակ սննդային,
լուսի և ջերմության ռեժիմում լինում են միա-
տարր, միաչափ և իրարից բոլորովին չեն տարբեր-
վում: Այլ ենք նկատում նոսր ցանքերում. այստեղ մի
կողմից թիփակալուծը ձգձգվում է, մյուս կողմից էլ հիմ-
նական ցողուններից դուրս են գալիս նոր ճյուղեր, ո-
րոնք նույնպես տալիս են ծաղիկներ, ալս պատճառով էլ
նոսր ցանքերի պայմաններում կորնզանի ծաղիկները
գտնվում են տարբեր յարուսներում, տարբեր սննդային,
լույսի և մասամբ էլ ջերմության ռեժիմում: Ծաղիկների
ծաղկումը և սերմերի հասունացումն այստեղ բավականին
երկար ժամանակում է կատարվում, որի հետևանքով էլ
ստացված սերմերը միատարր չեն, այստեղ կան խոշոր
սերմեր և շատ մանր սերմեր, որոնք գտնվում են երկրոր-
դական ճյուղերի վրա, կամ ուշ առաջացած ցողունի վրա:

Նոսր ցանքերից ստացված սերմերը եթե տեսակա-
վորենք ըստ նրանց մեծության, ապա մանրերի աբսո-
լյուտ քաշը հավասար է մոտ 13,2 գրամի, իսկ խոշորնե-
րինը՝ 16,9 գրամի: Իսկ որովհետև տեսակավորելը միտք

չունի և դժվար է, ապա միասին խառը վերցրած իր ար-
ստուղան քաշով հավասարվում է նորմալ խտություն ու-
նեցող դաշտերից սառցված սերմի արստուղան քաշին:

4. Յանքի տարբեր խտության պայմաններում ըս-
տացված ունդերի-պտղի արստուղան քաշը տարբեր է լի-
նում, այստեղ որքան ցանքը նոսր է լինում, ունդերն էլ
խոշոր են, լինում, որքան ցանքը խիտ է լինում, ունդերն
էլ մանր են լինում:

5. Յանքի տարբեր խտության պայմաններում ըս-
տացված կորնզանի սերմերի պտղաթաղանթը տարբեր է
լինում: Նոսր ցանքերում կոպիտ է լինում, կաշվեկերպ
և ընդհանուր քաշում ավելի մեծ տեղատվ է արտահայտ-
վում: Խիտ ցանքերում ավելի բարակ է, նուրբ և ընդ-
հանուր քաշում փոքր տեղատվ ունի:

6. Մեկ կիլոգրամում պարունակվող ունդեր-սերմերի
քանակը ցույց է տալիս, որ նոսր ցանքերում ավելի քիչ
են, խիտ ցանքերում ավելի շատ են: Օրինակ՝ 50-70
կիլոգրամ խտության դեպքում մեկ կիլոգրամում պա-
րունակվում է 40-42 հազար, մինչդեռ 110-120 կիլոգրամ
խտության դեպքում 48-49 հազար:

7. Հաջորդող կուլտուրայի գարնանացան ցորենի
բերքը կորնզանի ցանքի տարբեր խտության դեպքում
տարբեր է: Այսպես օրինակ՝ 50 կիլոգրամ խտության
դեպքում հավասար է 11,3 ցենտների, իսկ 110 կիլո-
գրամի դեպքում 15,8 ցենտների:

Ամիսփելով բազմահար կորնզանների ցանքի խտու-
թյան ազդեցությունը սերմի բերքատվության վրա դա-
լիս ենք այն եզրակացության, որ ցանքի նորման չպետք
է փոքրացնենք, որովհետև՝

1. Պակասում է մեկ միավոր տարածության վրա
գտնվող բույսերի քանակը:

2. Մեկ միավոր տարածության վրա պահասում է նաև ծաղիկների քանակը:

3. Սերմի բերքատվությունն իջնում է:

4. Դաշտերը, մանավանդ օգտագործման երկրորդ տարում, խիստ վարակվում են մոլմխոտերով:

5. Երկրորդ հարը խոտ ստանալու համար օգտագործելիս խոտի բերքատվությունն իջնում է:

6. Սերմերի հասունացումն ձգձգվում է, որի պատճառով էլ բերքահավաքի ժամանակ հասունացած սերմերը թափվում են և կորուստը մեծ է լինում:

7. Ստացված սերմերը վարակված են լինում մոլախոտերի սերմերով, որի պատճառով էլ տնտեսական պիտանիությունը լինում է ցածր:

8. Ստացած սերմերը միատարր չեն. կան խոշոր ու մանր սերմեր. սերմապատյանը կազմում է ընդհանուր քաշի 30-33⁰/₀-ը:

9. Մեկ կիլոգրամում պարունակվող սերմերի քանակը 8-10 հազարով ավելի պակաս է լինում, քան նորմալ խտություն ունեցող ցանքերից ստացված սերմերը:

Այդ բոլորից ելնելով բազմահար կորնզանը պետք է ցանել մեկ հեկտարին 110-120 կիլոգրամի հաշվով:

ՈՐ ՏԱՐՎԱՆԻՑ ԿՈՐՆԳԱՆԻ ԴԱՇՏԸ ԿԱՐԵԼԻ Է

ԹՈՂՆԵԼ ՍԵՐՄԻ ՀԱՄԱՐ

Այս հարցի վերաբերյալ նույնպես թե գրականության և թե պրակտիկայում դոյություն ունեն տարբեր կարծիքներ: Ոմանք կարծում են, որ պետք է թողնել սերմի համար միայն վերջին (այսինքն օգտագործման երկրորդ — երրորդ) տարին, որովհետև կորնզանի երիտասարդ

դաշտերը սերմի համար թողնելիս բույսերը խիստ թուլանում, ուժասպառ են լինում: Այդ պատճառով էլ գալիս են այն եզրակացության, որ կորնգանի տվյալ դաշտը կարելի է միայն մեկ անգամ թողնել սերմի համար: Հետազոտողներից մի քանիսն էլ այն կարծիքն են հայտնում, որ սերմի համար թողնելիս կորնգանի դաշտը չի թուլանում: Ահա նման տարաձայնություններից ելնելով մեր առաջ խնդիր էր դրված մեր պայմաններում պարզելու թե որ տարվանից թողնել դաշտը սերմի համար: Մեր հետազոտություններից ելնելով, որը կատարե ենք Ախաալի շրջանի Ծանտան գյուղում, պարզվեց հետևյալը՝

1. Կորնգանի ցանքը երկու տարի անընդհատ սերմի համար օգտագործելիս, սերմի բերքատվությունը չի իջնում:

2. Երբ կորնգանն առաջին տարին խոտի համար ենք օգտագործում, իսկ երկրորդ տարին սերմի համար, սերմի բերքատվությունը գրեթե չի փոխվում:

3. Երբ կորնգանն առաջին տարին սերմի համար ենք օգտագործում, իսկ երկրորդ տարին խոտի համար, նույնպես նկատելի տարբերություն չենք տեսնում:

Երևանի և կից նախալեռնային շրջանների ջրովի հողերի պայմաններում (Քանաքեռ) հնարավոր է նաև սերմ ստանալ ցանքի առաջին տարին, այսպես օրինակ՝ Գյուղատնտեսական Ինստիտուտի Քանաքեռի նախկին տնտեսությունում մեր կողմից ցանված կորնգանը տարբեր տարիներում օգտագործելով սերմի համար տվեց հետևյալ պատկերը (տես աղյուսակ № 7):

Թվերը կրկին անգամ ցույց են տալիս՝

1. Սերմի բերքատվությունը չի փոփոխվում. ա) եթե

երեք տարի անընդհատ սերմի համար ենք թողնում, բ) եթե առաջին տարին խոտի համար ենք թողնում, իսկ երկրորդ և երրորդ տարիները սերմի համար, գ) եթե առաջին և երկրորդ տարիներում խոտի համար ենք հընձում, իսկ երրորդ տարին՝ սերմի համար:

Աղյուսակ № 2

Անընդհատ սերմ ստանալու ազդեցությունը կորնգանի խոտի և սերմի բեռնավորյան վրա Քաճախի պայմաններում

№	Վարիանտներ	Ս ե ռ մ ի և խ ո տ ի բ ե ռ ք ք ց/հ		
		Ցանքի առաջին տարի	Ցանքի երկրորդ տարի	Ցանքի երրորդ տարի
1	№ 1	յերմ— 5,2	յերմ— 12,7	յերմ— 13,5
2	№ 2	խոտ — 31,2	յերմ— 11,7	յերմ— 13,7
3	№ 3	խոտ — 30,7	խոտ— 103,9	յերմ— 13,9
4	№ 4	յերմ— 5,1	յերմ— 11,9	խոտ— 105,6
5	№	յերմ— 5,5	խոտ — 99,7	խոտ— 106,2
6	№ 6	խոտ — 32,7	խոտ— 101,3	խոտ— 103,9

2. խոտի բերքատվությունը հուլյնսկես չի փոփոխվում, եթե՝

ա) երեք տարի անընդհատ խոտի համար ենք թողնում դաշտը,

բ) եթե առաջին և երկրորդ տարիներում սերմ ենք ստանում, իսկ երրորդ տարին խոտ,

դ) եթե միայն առաջին տարին ենք սերմ ստանում, իսկ երկրորդ և երրորդ տարիներին խոտ:

Սևանի ավազանում, Ապարանում, Ախտալում, Զանգեզուրում, Դարալագյազում, Թալինում և այլ տեղերում կատարված մեր հետազոտությունների ընթացքում արձանագրել ենք բազմաթիվ փաստեր, երբ ցանքի առաջին տարվանից մինչև չորրորդ տարին կորնդանի դաշտը անընդհատ թողնվել է սերմի համար և բույսերը չեն թուլացել:

Ինչպես խոտի բերքը ցանքի տարբեր տարիներում տարբեր է, այնպես էլ կորնդանի սերմի բերքը ցանքի տարբեր տարիներում տարբեր է (տես աղյուսակ № 8):

Աղյուսակ № 8

Կորնդանի սերմի բերքատվությունը ցանի արբեր արիներում

№	Վ ա յ ր ր	Սերմի բերքը ց/օգտագործման				
		1 տ.	2 տ.	3 տ.	4 տ.	5 տ.
	Սիսիանի շրջանի Բռնակոթան շրջի	6,5	8,1	6,4	3,1	3,2
2	Ազիդրեկովի շրջանի Մարտիրոս գյուղ անջրդի	7,12	9,7	6,9	2,3	2,9

Թվերը ցույց են տալիս, որ սերմի մաքսիմում բերքը ստացվում է օգտագործման երկրորդ տարում, որից հետո աստիճանաբար իջնում է:

Ստացված սերմի որակական հատկանիշներն ուսումնասիրելիս պարզվում է, որ սերմի որակը (մաքրությունը, տնտեսական պիտանիությունը) տարբեր ձևով օգտագործված դաշտերում տարբեր է: Այդ տեսակետից ուշագրավ է մեր կողմից Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղի գիշերավար կոչված հողամասում դրված փորձերը, որտեղ պարզվեց հետևյալը՝ (տես աղյուսակ № 9):

Project	Year	Value	Unit
1. Construction of a new school building	2015	100	USD
2. Purchase of a new car	2016	50	USD
3. Renovation of the old school building	2017	200	USD
4. Purchase of a new car	2018	50	USD
5. Renovation of the old school building	2019	200	USD
6. Purchase of a new car	2020	50	USD
7. Renovation of the old school building	2021	200	USD
8. Purchase of a new car	2022	50	USD
9. Renovation of the old school building	2023	200	USD
10. Purchase of a new car	2024	50	USD
11. Renovation of the old school building	2025	200	USD
12. Purchase of a new car	2026	50	USD
13. Renovation of the old school building	2027	200	USD
14. Purchase of a new car	2028	50	USD
15. Renovation of the old school building	2029	200	USD
16. Purchase of a new car	2030	50	USD
17. Renovation of the old school building	2031	200	USD
18. Purchase of a new car	2032	50	USD
19. Renovation of the old school building	2033	200	USD
20. Purchase of a new car	2034	50	USD
21. Renovation of the old school building	2035	200	USD
22. Purchase of a new car	2036	50	USD
23. Renovation of the old school building	2037	200	USD
24. Purchase of a new car	2038	50	USD
25. Renovation of the old school building	2039	200	USD
26. Purchase of a new car	2040	50	USD
27. Renovation of the old school building	2041	200	USD
28. Purchase of a new car	2042	50	USD
29. Renovation of the old school building	2043	200	USD
30. Purchase of a new car	2044	50	USD
31. Renovation of the old school building	2045	200	USD
32. Purchase of a new car	2046	50	USD
33. Renovation of the old school building	2047	200	USD
34. Purchase of a new car	2048	50	USD
35. Renovation of the old school building	2049	200	USD
36. Purchase of a new car	2050	50	USD
37. Renovation of the old school building	2051	200	USD
38. Purchase of a new car	2052	50	USD
39. Renovation of the old school building	2053	200	USD
40. Purchase of a new car	2054	50	USD
41. Renovation of the old school building	2055	200	USD
42. Purchase of a new car	2056	50	USD
43. Renovation of the old school building	2057	200	USD
44. Purchase of a new car	2058	50	USD
45. Renovation of the old school building	2059	200	USD
46. Purchase of a new car	2060	50	USD
47. Renovation of the old school building	2061	200	USD
48. Purchase of a new car	2062	50	USD
49. Renovation of the old school building	2063	200	USD
50. Purchase of a new car	2064	50	USD
51. Renovation of the old school building	2065	200	USD
52. Purchase of a new car	2066	50	USD
53. Renovation of the old school building	2067	200	USD
54. Purchase of a new car	2068	50	USD
55. Renovation of the old school building	2069	200	USD
56. Purchase of a new car	2070	50	USD
57. Renovation of the old school building	2071	200	USD
58. Purchase of a new car	2072	50	USD
59. Renovation of the old school building	2073	200	USD
60. Purchase of a new car	2074	50	USD
61. Renovation of the old school building	2075	200	USD
62. Purchase of a new car	2076	50	USD
63. Renovation of the old school building	2077	200	USD
64. Purchase of a new car	2078	50	USD
65. Renovation of the old school building	2079	200	USD
66. Purchase of a new car	2080	50	USD
67. Renovation of the old school building	2081	200	USD
68. Purchase of a new car	2082	50	USD
69. Renovation of the old school building	2083	200	USD
70. Purchase of a new car	2084	50	USD
71. Renovation of the old school building	2085	200	USD
72. Purchase of a new car	2086	50	USD
73. Renovation of the old school building	2087	200	USD
74. Purchase of a new car	2088	50	USD
75. Renovation of the old school building	2089	200	USD
76. Purchase of a new car	2090	50	USD
77. Renovation of the old school building	2091	200	USD
78. Purchase of a new car	2092	50	USD
79. Renovation of the old school building	2093	200	USD
80. Purchase of a new car	2094	50	USD
81. Renovation of the old school building	2095	200	USD
82. Purchase of a new car	2096	50	USD
83. Renovation of the old school building	2097	200	USD
84. Purchase of a new car	2098	50	USD
85. Renovation of the old school building	2099	200	USD
86. Purchase of a new car	2100	50	USD

1. Կորնգանի դաշտն անընդհատ սերմի համար թողնելով ստացված սերմի ծլունակությունը չի փոփոխվում՝ անկախ նրան, թե որ երրորդ տարում է ստացվել այդ սերմը:

2. Եթե կորնգանի դաշտն անընդհատ թողնվում է սերմի համար, ապա հաջորդ տարիներում ստացված սերմը վարակված է լինում մոլախոտերի սերմերով, որի պատճառով էլ սերմի մաքրության $0/0$ -ը իջնում է: Այսպես օրինակ, օգտագործման առաջին տարում սերմի մաքրությունը հավասար է $90,50/0$ -ի, երկրորդ տարում՝ $81/0$ -ի, երրորդ տարում՝ $68/0$ -ի:

Այդ հետևանք է նրան, որ կորնգանի դաշտը ամեն տարի սերմի համար թողնելով այնտեղ եղած մոլախոտերի զգալի մասն ավելի շուտ են հասունանում, սերմերն էլ մեծ չափով թափվում են նախ քան կորնգանի սերմի բերքահավաքը, որի պատճառով էլ ամեն տարի սերմի համար թողնվող դաշտերում մոլախոտերի թիվը քանի քանում շատանում է:

3. Եթե կորնգանի դաշտը անընդհատ թողնվում է սերմի համար, ապա հաջորդ տարիներում ստացված սերմի տնտեսական պիտանիությունը նույնպես վատանում է. օրինակ, ստացված սերմերի տնտեսական պիտանիությունն օգտագործման առաջին տարում հավասար է $67,8/0$ -ի, երկրորդ տարում՝ $59,1/0$ -ի, իսկ երրորդ տարում՝ $51,6/0$ -ի:

4. Կորնգանի այն դաշտերը, որոնք օգտագործման առաջին տարում խոտ ստանալու նպատակով հնձվել են կոկոն վիճակում, երկրորդ և երրորդ տարում ապրիս են ավելի բարձր մաքրության սերմ, քան այն դեպքում, երբ առաջին տարին էլ դաշտը սերմի համար է

թողնվում: Օրինակ, օգտագործման երկրորդ տարում ստացված սերմի մաքրությունը, երբ նախորդ տարում էլ սերմի համար է թողնված եղել դաշտը, հավասար է $81\frac{1}{10}\%$ -ի, իսկ այն դեպքում, երբ նախորդ տարում հնձվել է խոտի համար, հավասար է $96\frac{1}{10}\%$ -ի:

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ օգտագործման երրորդ տարում ստացված սերմի մաքրության $\frac{1}{10}$ -ը շատ ավելի բարձր է այն վարիանտներում, որտեղ օգտագործման առաջին և երկրորդ տարիներում կորնգանը հնձվել է խոտի համար՝ կոկոնակալման շրջանում: Օրինակ՝ երրորդ վարիանտում ստացված սերմի մաքրությունը հավասար է $97,5\frac{1}{10}\%$, որովհետև նախորդ տարիներում երբեք սերմի համար չի թողնվել: Երկրորդ վարիանտում մաքրությունը հավասար է $86\frac{1}{10}\%$ -ի, որովհետև նախորդ տարիներում մեկ անգամ այդ դաշտը թողնվել է սերմի համար: Եվ վերջապես առաջին վարիանտում մաքրությունը իջնում, հավասարվում է $68\frac{1}{10}\%$ -ի, որովհետև մինչ այդ դաշտն երկու անգամ էլ թողնվել է սերմի համար:

Սերմի համար ընտրված կորնգանի դաշտը գարնանից չի կարելի փոցխել, որովհետև այդտեղ գտնվող մոլախոտերի զգալի մասը կծլեն և դաշտը կվարակեն մոլախոտերով:

Քանի որ կորնգանի սերմագաշտը պետք է ընտրել խոտադաշտալին՝ ցանքաշրջանառության դաշտերից, ապա հետաքրքիր է պարզել թե արդյոք սերմագաշտը իր սպեցիֆիկ հատկութուններով որևէ ազդեցություն թողնում է հաջորդող կուլտուրայի (գարնանացան ցորենի) բերքատվության վրա թե ոչ, կամ արդյոք անընդհատ սերմ ստանալը ինչպես է անդրադառնում հաջորդող կուլտու-

րայի բերքատվության վրա: Այդ նպատակի համար Սի-
սիանի շրջանի Բռնակոթ գյուղում մեր կողմից դրված
փորձերից պարզվեց (տես աղյուսակ № 10), որ

Աղյուսակ № 10

Կորեզանի անրնդհաս սեւմ սահմալու աղեցուրունը հաջորդող
կուլտուրայի բերեւութւոյան վրա

№ №	Վ ա ր ի ա ն տ	Օգտագործմ. 1 տարի		Օգտագործմ. 2 տարի		Հաջորդող կուլ- տուրան		
		Սերմ ց/հ	Խոտ ց/հ	Սերմ ց/հ	Խոտ ց/հ	Բերք ց/հ	°/0	1 բ.մ. մոլա- խոտ.թ
1	№ 1	6,8	—	8,2	—	12,2	83,5	67
2	№ 2	6,6	—	—	91,4	14,2	97,3	19
3	№ 3	—	80,2	9,0	—	13,9	93,6	31
4	№ 4	—	78,6	—	93,7	14,6	100	7

1. Հաջորդող կուլտուրայի (գարնանացան ցորենի)
մաքսիմում բերք ստացվում է այն դեպքում, երբ կո-
րնդանն օգտագործման առաջին և երկրորդ տարիներում
հնձում ենք խոտի համար:

2. Գարնանացան ցորենի մինիմում բերք ստացվում
է, երբ կորնդանն օգտագործման առաջին և երկրորդ
տարիներում հնձում ենք սերմի համար:

3. Հաջորդող կուլտուրայի բերքատվությունը հա-
մարյա թե նույնն է երկրորդ և երրորդ վարիանտնե-
րում:

Այս բոլոր փաստերի պատճառը որոշ չափով հա-
կանալի է լինում, երբ ուսումնասիրում ենք հաջորդող

կուլտուրայի (գարնանացան ցորենի) մոլախոտերով վա-
րակլածության աստիճանը։ Աղյուսակը ցույց է տալիս,
որ մոլախոտերի թիվը մինիմումի է հասնում գարնանա-
ցան ցորենի այն դաշտերում, որին նախորդ հանդիսա-
ցող կորնգանը շարունակ հնձվել է խոտի համար։ Գար-
նանացան ցորենի դաշտը մոլախոտերով խիստ վարակ-
ված է լինում այն դեպքում, երբ նախորդ հանդիսացող
կորնգանը երկու տարի անընդհատ հնձվել է սերմի հա-
մար, որովհետև այդ ժամանակ մոլախոտերի զգալի մա-
սը շուտ հասունանում ու մինչև կորնգանի սերմի բեր-
քահավաքը թափվում է և դաշտը նորից մոլախոտերով
վարակում։

Աղյուսակը ցույց է տալիս, որ հաջորդող կուլտու-
րայի (գարնանացան ցորենի) դաշտում մոլախոտերի
թիվը խիստ փոփոխվում է, կախված այն բանից, թե
նախորդ հանդիսացող կորնգանի դաշտը սերմի համար
օգտագործվել է առաջին թե երկրորդ տարում։ Այն դեպ-
քում, երբ կորնգանը սերմի համար է թողնվել օգտա-
գործման առաջին տարում, իսկ երկրորդ տարվա գար-
նանը փոցխելուց հետո հնձվել է խոտի համար կոկոն
վիճակում, մոլախոտերի քանակը ցորենի դաշտում քիչ է
լինում։ Այդ հետևանք է այն բանի, որ մի կողմից փոց-
խելու միջոցով ստիպել ենք ծլելու մոլախոտերի սերմե-
րի զգալի մասին, մյուս կողմից էլ խոտը շուտ հավաքե-
լու հետևանքով մոլախոտերի սերմերը չեն թափվել։

Այն դեպքում, երբ կորնգանն օգտագործման երկ-
րորդ տարում սերմի համար ենք թողել և սրից հետո
այդ ցանքը խոտի համար չի օգտագործվել, ապա հա-
ջորդող գարնանացան ցորենի դաշտում մոլախոտերի թի-
վը զգալի չափով ավելացել է։

Այստեղից պարզ է, որ միևնույն պայմաններում բայց սերմի համար տարբեր ձևով օգտագործված կորնֆանի ցանքը, հաջորդող կուլտուրայի բերքատվությունը բարձրացնում է տարբեր չափով և դրա հիմնական պատճառներից մեկը մոլախոտերով վարակված լինելն է:

Այս բոլորից պետք է դալ հետևյալ եզրակացության՝ քանի որ տարբեր տարիներում ստացված սերմի բերքատվության ու նրա ծլունակության մեջ ոչ մի տարբերություն չկա, ապա այն խնդիրը թե որ տարիների թողնել սերմի համար, հիմնականում պետք է բլիսեցնել տվյալ դաշտի վիճակից: Այն դեպքում, երբ դաշտը մաքուր է, մոլախոտեր չկան, սերմի համար կարելի է թողնել ինչպես օգտագործման առաջին տարին, այնպես էլ երկրորդ տարին: Այն դեպքում, երբ դաշտն ուժեղ վարակված է մոլախոտերով, սովորաբար սերմի համար չպետք է օգտագործել:

ՈՐ ՀԱՐԸ ԹՈՂՆԵԼ ՍԵՐՄԻ ՀԱՄԱՐ

Այն վայրերում, որտեղ տարածված են ուկրաինական կորնֆանների, հարցն ինքն ըստ ինքյան լուծվում է, որովհետև սրանք հնձվում են միայն մեկ անգամ և խոտք լինել չի կարող երկրորդ հարի մասին: Հետևապես Հայաստանի բոլոր այն շրջաններում, որտեղ դեռևս մշակվում է միահար ուկրաինական կորնֆանը, անհրաժեշտ է սերմի համար թողնել միայն առաջին հարը: Մակայն, խնդիրն ամբողջությամբ փոխվում է տեղական բազմահար կորնֆանի մշակման դեպքում: Այս դեպքում էլ խնդրին պետք է երկու կերպ մոտենալ. անջրդի պայմաններում միայն առաջին հարը թողնել սերմի համար, որովհետև երկրորդ հարը շատ թույլ է դար-

դանում, մանավանդ չորային տարիներին, ու սերմ քիչ է տալիս (տես աղյուսակ № 11):

Աղյուսակ № 11

Անջրդի պայմաններում բազմահար կորեգանի սերմի

բեբասվությունն քառ հարի

№ №	Վ ա յ ր ւ	Ջրովի է թե անջրդի	Սերմի բերքը ց/հ	
			1 հար	2 հար
1	Գորիսի շրջան Մուղան- ջուղ	Անջրդի	5,7	2,3
2	Գորիսի շրջան Ալեղու- լիշեն	»	5,9	2,07
3	Մխիթան Նորավան	»	6,5	1,9
4	Մխիթան Բռնակոթ	»	6,1	2,0
5	Բասարգեշար Թյուսիկուլի	»	5,9	1,8

Թվերը ցույց են տալիս, որ բազմահար կորեգան-
ները մեզ մոտ անջրդի պայմաններում երկրորդ
հարի ժամանակ տալիս են սերմի շատ ցածր բերք,
ուստի անհրաժեշտ է թողնել սերմի համար առաջին
հարը:

Բազմահար կորեգանի ջրովի ցանքերում շատ հա-
ճախ հարկ է լինում որոշել, թե որ հարը թողնել սեր-
մի համար՝ առաջին, թե երկրորդ: Տարիների մեր բազ-
մաթիվ դիտողություններից և ստացիոնար փորձերից,
որտեղ միևնույն պայմաններում առաջին հարը սերմի
համար է հնձվել, իսկ երկրորդ հարը խոտի համար, կամ

հակառակը՝ առաջին հարը խոտի համար է հնձվել, իսկ երկրորդ հարը սերմի համար, պարզվել է (տես աղյուսակ № 12),

Աղյուսակ № 12

Ձրովի պայմաններում բազմահար կորեգանի սերմի բերքատվությունը
pus հարի

№ №	Վ ա յ ր ւ ը	Առաջին հար		Երկրորդ հար	
		Բերքը ց/հ	Սերմի ժաքը ու թ. 0/0-ը	Բերքը ց/հ	Սերմի ժաքը ու թ. 0/0-ը
1	Սիսիանի շրջան Դարաբաս	6,9	82,0	5,3	97,6
2	Սիսիանի շրջան Ղարաբախ	7,1	79,3	6,3	96,0
3	Միկոյանի շրջան Մալիշկա	7,7	84,5	5,9	95,8
4	Հենինական	7,2	81,0	6,4	96,5
5	Մարտունի Գյոզալգարա	6,7	78,0	5,7	96,4
6	Աղիգրեկով Մարտիրոս	16,91	87,5	3,4	96,0

որ Ձրովի պայմաններում կորեգանի սերմի բերքը առաջին հարի ժամանակ ավելի բարձր է, քան երկրորդ հարի գեպքում, որտեղ բույսերը ավելի քիչ են թփափափված։ Առաջին հարից ստացված սերմի մաքրությունը ավելի պակաս է և հավասար է 81-ից մինչև 85,5⁰/0, մինչդեռ երկրորդ հարի ժամանակ 95,7-95,8⁰/0:

Այն տարիներին, երբ առաջին հարի ժամանակ անձրևների առատության հետևանքով կորեգանի բույսերը

պառկում են, անհրաժեշտ է առաջին հարը հնձել խոտի համար և սերմի համար թողնել երկրորդ հարը: Այն դեպքում, երբ առաջին հարը ծաղկման ժամանակ ամ-
սրամած եղանակներ են լինում, անհրաժեշտ է հնձել խոտի համար և սերմի համար թողնել երկրորդ հարը:

Երկրորդ հարի սերմի բերքը կախված է հաս հա-
խորդ (առաջին) հարի խոտի բերքահավաքի ժամկետից: Բոլորովին միևնույնը չէ թե առաջին հարը երբ է հնձ-
վել: Մեր ուսումնասիրությունները, կատարված Սիսիանի շրջանում և Լենինականում, ցույց են տալիս (տես ա-
ղյուսակ № 13),

Աղյուսակ № 13

Բազմահար կորեզանի երկրորդ հարի սերմի բերքատվությունը կախված
առաջին հարի խոտի բերքահավաքի ժամկետից

№	1-ին հարի (խոտի) բերքահավաքի ժամկետը	Երկրորդ հարի ցուցանիշները						
		Բույսի բարձրու- թյունը	Թփակա- լում	Մեկ ցող- կից օգ- կույզ	Մեկ օգ- կույզից ծա- ղիկի թիվը	Մեկ օգ- կույզից սերմի քանակը	Սերմա- կալման օ/ւ	Սերմի բերքը ց/հ
1	Կոկոնակալման շրջան	95 սմ.	6	4	64	59	92,7	6,7
2	Ծաղկման սկիզբը	80 »	5	3	62	42	7,7	4,2
3	Լրիվ ծաղկմ. շրջան	75 »	2	2	60	17	28,3	1,2
4	Ունդերի առաջաց- ման շրջան	72 »	2	2	60	16	26,6	1, 2

որ այն դեպքում, երբ բազմահար կորեզանի առա-
ջին հարը օգտագործում ենք խոտի համար, իսկ երկրորդ

հարը սերմի համար, ապա առաջին հարը պետք է հնձել բույսի կոկոն վիճակում: Այլապես ուշացման դեպքում բույսերը մեծ քանակությամբ սննդանյութերը սպառելով առաջին հարի ծաղկման, փոշոտման և սերմակալման պրոցեսները կազմակերպելու վրա ուժասպառ են դառնում, որպիսի երևույթը խիստ կերպով ազդում է հաջորդ հարի սերմի բերքատվության վրա: Նախորդ հարը կոկոն վիճակում հնձելու դեպքում տնտեսությունը երկու տեսակետից է շահում. առաջին հարից ստանում է սննդանյութերով հարուստ կեր և երկրորդ հարն էլ հասունանալու ավելի երկար ժամանակ ունենալով տալիս է շատ սերմ:

ՄԵԿ ՏԱՐՈՒՄ ԲԱԶՄԱՀԱՐ ԿՈՐՆԳԱՆԻ ԴԱՇՏԻՑ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ՍԵՐՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի է, որ տեղական բազմահար կորնգանը մեղմոտ ցանքի երկրորդ տարում տալիս է երկու, իսկ ջրովի պայմաններում նույնիսկ երեք հար: Հայտնի դարձավ նաև այն, որ սերմի համար թողնվում է միայն մեկ հարը, իսկ մյուս հարը, լինի դա առաջին թե երկրորդ, հնձում են խոտի համար: Հետազոտությունը ընթացքում բազմաթիվ փաստեր են արձանագրվել, երբ ջրովի պայմաններում առաջին հարը սերմի համար հավաքելուց հետո, երկու անգամ էլ խոտի հար է ստացվել: Այսպես օրինակ՝ Նրեանի պայմաններում մեկ հարը սերմի համար է հնձվում, իսկ երկու հարը խոտի: Նույնը նաև Քանաքեռում, Մալիշկայում և այլ տեղերում: Մեր առաջ խնդիր էր դրված, թե հնարավոր չի արդյոք միևնույն տարում կորնգանի դաշտից երկու անգամ սերմի բերք ստանալ:

Այդ նպատակի համար ռւսումնասիրությունը տարվել է Քանաքեռի դռերի պայմաններում գտնվող Գյուղինստի-տուարի տնտեսությունում 1938 թվի ցանված երկու հեկտար կորնզանի ցանքի վրա:

Ուսումնասիրությունից պարզվեց (տես աղյուսակ № 14),

Աղյուսակ № 14

Բազմահար կորնզանի սերմի բերասվուրյունը Քանաքեռի ջրովի պայմաններում, ըստ հարի

Էկստիպը և ցանքի տարին	Փորձի տարին	Առաջին հար			Երկրորդ հար			Առաջին և երկրորդ հարերի սերմի բերքը ց/հ
		Լրիվ ծաղկման ժամկետը	Սերմի բերքա-հավաքը	Սերմի բերքը ց/հ	Լրիվ ծաղկման ժամկետը	Սերմի բերքա-հավաքը	Սերմի բերքը ց/հ	
Սիսիանի էկստիպ 1933 թ.	1939	15/5	1/6	17,2	14/7	27/7	6,3	23,5
»	1940	19/5	4/6	14,3	17,7	3,8	5,1	19,4

որ Քանաքեռի դռերի պայմաններում հնարավոր է մեկ տարվա ընթացքում ստանալ երկու անգամ սերմի բերք, ըստ որում առաջին հարի ժամանակ սերմի բերքն ավելի բարձր է քան երկրորդ հարի ժամանակ: Երկու հարի սերմի բերքն օգտագործման առաջին տարում հա-վասար էր 23,5 ցենտների, իսկ երկրորդ տարում՝ 19,4 ցենտների: Երկրորդ հարից ստացված սերմն իր որակով ոչնչով հետ չի մնում առաջին հարից ստացված սերմից: Աղյուսակից պետք է գալ այն եզրակացության, որ մեզ մոտ նախալեռնային շրջանների ջրովի պայմաններում ցանված կորնզանները պետք է ինտենսիվորեն օգտա-

գործվեն սերմի համար՝ յուրաքանչյուր տարում երկու
բերք ստանալու նպատակով, որով և նպաստած կլինենք
կարճ ժամանակամիջոցում կորնզանի սերմի հսկայական
պահանջի բավարարմանը:

ԲԱԶՄԱՀԱՐ ԿՈՐՆԳԱՆԻ ՓՈՇՈՏՈՒՄԸ

Հայտնի է, որ բազմամյա թիթեռնաթաղկավոր բույ-
սերից շատերի, որոնց թվում և կորնզանի ծաղիկները
խաչաձև են փոշոտվում: Պարզվել է նաև, որ կորնզանի
ծաղիկները միջառների միջոցով են փոշոտվում: Հետևա-
պես նրանց սերմի արտադրողականութունը մեծ չափով
կախված է փոշոտիչների առկայութունից:

Ուսումնասիրութուններից պարզվել է, որ բազմա-
հար կորնզանները տալիս են շատ աննշան տոկոս ինք-
նափոշոտում, բացի այդ, աչն բոլոր դեպքերում, երբ
փոշոտումն կատարվում է խաչաձև, բայց մեկ բույսի սահ-
մաններում, սերմեր նույնպես քիչ են ստացվում: Դեռևս
Չ. Դարվինը իր բեղմնավոր փորձերից և խորիմաստ դի-
տողություններից եկել էր այն եզրակացության, որ բույ-
սերի առողջ սերունդ ստանալու համար պահանջվում է,
որպեսզի նրանք խաչաձև փոշոտվեն: Այդ ուղղությամբ
կորնզանի նկատմամբ տարված ուսումնասիրություննե-
րը ցույց են տալիս, որ թե ինքնափոշոտումից առաջա-
ցած կորնզանի սերմերը, և թե այն սերմերը, որոնք
ստացվել են մեկ բույսի սահմաններում ծաղիկների փո-
շոտումից, տալիս են շատ թույլ, վտիտ բույսեր: Ուրեմն
կորնզանի ինչպես սերմի, այնպես էլ խոտի բերքատվու-
թյան բարձրացման տեսակետից շատ կարևոր է, որպեսզի
նրանց փոշոտումը կատարվի տարբեր բույսերի սահման-

ներում: Կորնզանի խաչածն փոշոտման համար պահանջվում է մեծ քանակությամբ վայրի բրդոտ մեղուների կամ մեղրատու մեղուների առկայություն:

Սովետական Հայաստանի պայմաններում, վերջին 15 տարվա ընթացքում, մեր աչքի առաջ հատկապես կորնզանի դաշտերում աստիճանաբար նվազում է վայրի բրդոտ մեղուների առանց այն էլ քիչ քանակը: Դա հետևանք է այն բանի, որ մեզ մոտ հիմնականում վերացվել են միջնակները, ամենուրեք քիմիական եղանակով անխնա պալքար են կազմակերպում վնասատուների դեմ: Հետևապես կորնզանի ինչպես նաև կուլտուրական շատ բույսերի հիմնական փոշոտիչը մնում է կուլտուրական մեղուն:

Հայաստանի կորնզանացան շատ վայրերում կազմակերպված բազմաթիվ տարիների մեր դիտողություններն, ինչպես նաև մի շարք փորձերը համոզում են մեզ, որ մեղուների ինտենսիվ աշխատանքը կորնզանի դաշտում կախված է.

1. Մեղվանոցներից կորնզանի տվյալ դաշտի հեռավորությունից:

2. Կորնզանի ցանքերի տարածությունից և մեղուների քանակից:

3. Մեղուների վարժեցումից:

4. Կորնզանի ծաղկման ընթացքում տեղի ունեցող եղանակից:

5. Կորնզանի սերմադաշտի մոտ գտնվող խոտի համար հատկացված կորնզանի մյուս դաշտերի հնձի ժամկետից:

Կորնզանի դաշտի հեռավորություն խնդրի ուսումնասիրությունը Մարտունու շրջանի Զոլաքար գյուղում, նույն շրջանի վերին Ղարանլու գյուղում, Մխիթանի

Ինքնաշար կորեզանների դասից մեղվանցի հեռախոսային ազդեցությունը
կորեզանի սերմի բերանավայրյան վեա
(Յաննի երկրորդ սարուս)

Վայրը	Կոբն գանի դաշտում				300 մետր հեռավորությամբ				700 մետր հեռավորությամբ				1,5 կմետր հեռավորությամբ			
	1 քմ. մեղվանցի դասի միլիմետր	100 ծառ հեռ միլիմետր	1 զմ. մեղվանցի դասի միլիմետր	1 զմ. մեղվանցի դասի միլիմետր	1 քմ. մեղվանցի դասի միլիմետր	100 ծառ հեռ միլիմետր	1 զմ. մեղվանցի դասի միլիմետր	1 զմ. մեղվանցի դասի միլիմետր	1 քմ. մեղվանցի դասի միլիմետր	100 ծառ հեռ միլիմետր	1 զմ. մեղվանցի դասի միլիմետր	1 զմ. մեղվանցի դասի միլիմետր	1 քմ. մեղվանցի դասի միլիմետր	100 ծառ հեռ միլիմետր	1 զմ. մեղվանցի դասի միլիմետր	
Մարտունի Զոլաբար	7-8	74	12,1	3-5	60	8,1	1	40	4,9	—	30	2,7				
Մարտունի Վերին Դալան-լույ	8-9	71	11,2	3-4	59	7,9	1-2	39	4,2	1	35	2,1				
Սիսիան Շաբի	6-7	69	12,5	4-5	62	7,8	1	32	3,7	—	28,2	1,9				
Թալին Այնալու	6-8	72	10,9	5	60	6,9	1	35	3,6	—	27	2,3				

շրջանի Շաքի և Բնուենիս գյուղերում, Բասարգեչարի շրջանի Թուսքյուլի գյուղում, Թալինի շրջանի Այնալու և Ագարակ գյուղերում և այլն ցույց տվեց (տես աղյուսակ № 15), որ

1. Մեկ քառակուսի մետրի վրա աշխատող մեղուների քանակը կախված է այն բանից, թե մեղվանոցը որքան հեռու է գտնվում կորնգանի դաշտից: Այն դեպքում, երբ մեղվանոցը գտնվում է անմիջապես կորնգանի դաշտում, մեկ քառակուսի մետրի վրա աշխատում են 6-9 մեղու: Որքան մեղվանոցը հեռու է գտնվում, այնքան էլ մեղուների քանակը սլակտում՝ մինիմումի է հասնում և նույնիսկ 1000-1500 մետրի վրա արդեն բոլորովին մեղուներ չեն լինում:

2. Կորնգանի ծաղկի բեղմնավորումը, որով և պայմանավորված է սերմի առաջացումը, կախված է այդ դաշտում աշխատող մեղուների քանակից: Որքան մեղուների թուիչքը դաշտում ինտենսիվ է լինում, այնքանով էլ 100 ծաղկից առաջացած պտուղների թիվն էլ բարձր է լինում: Այլ խոսքով, մեղվանոցի մոտիկ լինելու դեպքում ֆերտիլիտեթյունը հավասար է $69\sim 74\%$ -ի, իսկ հեռու լինելու դեպքում իջնում, հավասարվում է 27% -ի:

3. Վերջապես, այդ բոլորից ելնելով, կորնգանի սերմի բերքատվութունը կախված է այն բանից, թե ավյալ դաշտն որքանով մոտիկ է մեղվանոցից: Այն դեպքում, երբ մեղվանոցը գտնվում է դաշտում, մեկ հեկտարից ըստացվում է 10,9—12,5 ցենտներ սերմ: Որքան մեղվանոցը կորնգանի դաշտից հեռու է գտնվում, այնքան էլ սերմի բերքատվությունն իջնում է. այսպես օրինակ՝ 300 մետր հեռավորության դեպքում ստացվում է հեկտարից 6,9—

8,1 ցենտներ, 700 մետրի դեպքում՝ 3,6—4,9 ցենտներ և վերջապես մեկից մեկուկես կիլոմետրի դեպքում՝ 1,9—2,7 ցենտներ:

Ահա այդ է պատճառը, որ Միսիանի շրջանի Շաքի գյուղի «Դյավա Օլան» հողամասում, որը գտնվում է մեղվանոցից 7 կիլոմետրի վրա, անկախ նրան, որ կորնդանը հրաշալի դաշտ էր, բավականին բարձր, ուժեղ թփակալված, առատորեն ծաղկած, հիվանդութվուններից զերծ, մեղուներ չլինելու հետևանքով 1944 թ. հեկտարից ստացվեց 1,2 ցենտներ սերմ:

Մեղվանոցի մոտիկ լինելու նշանակութունը ևս մեկ անգամ ճշտվեց Բանաքեռի պայմաններում Գյուղատնտեսական Ինստիտուտի ուսումնական անտեսութվունում ցանված կորնդանի դաշտում: Սովորաբար այդ դաշտում կորնդանների ֆերտիլիութվունը (100 ծաղկից քանի սերմ է առաջացել) 60—65⁰₀-ից չէր բարձրանում: 1939 թ. կորնդանի այդ դաշտը փոխադրեցին անասնապահական զոնալ կայանի մեղուները և սահեցին այդ տեղ մինչև առաջին հարի հնձելը: 1939 թ. այդտեղ գտնվող կորնդանների ֆերտիլիութվունը բարձրացավ մինչև 91,5⁰₀-ի: Մեկ քառակուսի մետրի վրա աշխատում էին երբեմն 9—10 մեղուներ, որի հետևանքով էլ ստացվեց հեկտարից 13,5 ցենտներ սերմ:

Մեղվանոցին մոտիկ լինելու նշանակութունը մեկ անգամ ևս ճշտեցինք Թալինի շրջանի Վերին Հաջի-Ղալա գյուղում՝ 1938 թ.: Մինչ այդ, այդ գյուղում կորնդանից ստացվում էր 1,2—2,5 ցենտներ սերմի բերք: 1938 թ. Հոկտեմբերյանի շրջանի № 4 սովխոզի մեղուները փոխադրեցին Վերին Հաջի-Ղալա գյուղ և տեղավորեցին կորնդանի մեկ դաշտի մոտ, որը պատկանում էր բրիգադիր Նահապետ Հայրապետյանին: 1938 թ. այդ դաշտից

ստացվեց հեկտարից 14,2 ցենտներ կորնգանի սերմ:

№ 15 աղյուսակից պետք է գալ նաև այն եզրակացության, որ կորնգանի ծաղկման շրջանում մեղուների փեթակները պետք է տեղափոխել կորնգանի դաշտը Այդպես են վարվում Թալինի շրջանի մի շարք գյուղերը (Ագարակ, Այնալու, Վոսիկեթաս և այլն), որոնք ստանում են հեկտարից 18—20 ցենտներ կորնգանի լավորակ սերմ:

Քանաքեռում, Մարտունիում, Սիսիանում կատարված դիտողություններից պարզվում է, որ կորնգանի դաշտի տարբեր տեղերում, թե մեղուների քանակը և թե Փերտիլիությունը տարբեր են: Փեթակները դասավորված տեղից որքան հեռանում ենք դեպի դաշտի կենտրոնը, կամ հակառակ կողմը, այնքանով էլ մեկ քառակուսի մետրի վրա մեղուների քանակը պակսում է, այսպես օրինակ Քանաքեռում փեթակների մոտ մեկ քառակուսի մետրի վրա աշխատում էին 9—11 մեղու, 50 մետրի վրա 8-9 մեղու, 200 մետրի վրա 5—6 մեղու և այլն: Նույն օրինակաբար էլ պակասում է Փերտիլիությունը: Այստեղից եզրակացություն, որ մեղուների փեթակները պետք է հավասար հեռավորությունը դասավորել կորնգանի ամրոց դաշտում:

Մովեստական Հայաստանի կորնգանացան, շրջաններում ինչպես կորնգանի դաշտում, այնպես էլ նրա շրջակայքում տարածված են մի շարք այլ բույսեր, որոնք ճանաչված են, որպես մեղրատուներ. երբեմն էլ կորնգանի համեմատությունը ավելի լավ մեղրատուներ, որոնք զբաղվում են մեղուների ուշադրությունը:

Մեր դիտողությունները ցույց են տալիս, որ այն դեպքում, երբ կորնգանի սերմադաշտում կամ մոտիկ շրջ

Հակայքում որպես մոլախոտեր տարածված են լինում այդ մեղրատու բույսերը, կամ նրանցից որևէ մեկը, կամ մի քանիսը, և նրանց ծաղկումը համընկնում է կորնզանի ծաղկման հետ, անշուշտ մեղուների մի զգալի մասը թռիչք է գործում դեպի այդ մոլախոտերի ծաղիկներն, որով և թուլանում է կորնզանի փոշոտման գործողութիւնները: Այդ բացը վերացնելու համար անհրաժեշտ է նախ և առաջ սերմադաշտում քաղհան կատարել, հեռացնել այդ մեղրատու բույսերը և շրջապատի բուսականութիւնն էլ հնձել մինչև ծաղկելը:

Մեր բազմաթիւ գիտողութիւնները և ստացիոնար փորձերը ցույց են տվել, որ նախօրոք ընտրված սերմադաշտերի սերմարտադրողականութիւնը՝ սերմի բերքատուութիւնը կախված է նաև շրջապատի խոտ ստանալու համար թողնված կորնզանի դաշտերի հարի ժամանակից (տես աղյուսակ № 16):

Աղյուսակ № 16

Սերմադաշտի օրշապատի կորնզանի խոտի բեռահատվախի ժամկետի ազդեցությունը կորնզանի սերմի բերահատվախի վրա (ցանքի երբորդ տարի)

№	Վ ա յ ր ը	Շրջապատի կորնզանի դաշտերը հնձվել են կոկոն վիճակում			Շրջապատի կորնզանի դաշտերը հնձվել են ծաղիկ վիճակում		
		Սերմադաշտի մեկ ք.մ.-ի վրա սերմերի թիվը	Ֆերտիլիտի քանակը	Սերմի բերքը ց/հ.	Սերմադաշտի մեկ ք.մ.-ի վրա սերմերի թիվը	Ֆերտիլիտի քանակը	Սերմի բերքը ց/հ.
1	Սիսիան-Բոնակոթ	7—6	75,6	11,9	5—6	62,7	6,3
2	Սիսիան-Շաքի	8—9	77,8	12,2	4—5	61,0	6,9
3	Մարտունի-Զուլա-բար	7—9	72,6	11,7	3—5	58,1	5,3

Թվերը ցույց են տալիս, որ այն դեպքում, երբ շրջապատի խոտի համար նախատեսնված կորնդանը հընձվում է ծաղիկ վիճակում, մինչ այդ դաշտերի հնձելը եղած մեղուների մի մասը թռչում է նաև դեպի այդ դաշտերը, որով և թուլանում է սերմադաշտերում փոշոտիչ-մեղուների գործունեությունը, որի հետևանքով էլ սերմի բերքատվությունն իջնում է: Աղյուսակի թվերը ցույց են տալիս, որ այն դեպքում, երբ սերմադաշտի շրջապատի կորնդանը խոտի համար հնձում են կոկոն վիճակում, սերմադաշտում մեղուների գործունեությունն աշխուժանում է, ֆերտիլիտիությունը բարձրանում և ընդհանրապես ստացվում է սերմի բարձր բերք:

Բերված տվյալներից պետք է գալ այն եզրակացություն, որ սերմադաշտի ընտրությունից հետո շրջապատի դաշտերում կորնդանի բերքահավաքը խոտի համար պետք է կատարել կոկոն վիճակում, որով և նախապայմաններ ստեղծած կլինենք սերմի բերքի բարձրացման համար:

Վերջին տարիների ընթացքում երեքնուկի նկատմամբ բավականին շատ փորձեր են կատարվել մեղուների նախօրոք, այսպես կոչված, վարժեցման ուղղությամբ: Բոլոր հեղինակներն էլ մեղուներին դեպի երեքնուկի դաշտը «մոբիլիզացիայի» ենթարկելու համար երեքնուկի ծաղկման մոմենտին կադմատերապում են մեղվի ընտանիքի օժանդակ սնուցում, որը կայանում է հետևյալում. շաքարի լուծույթի մեջ գցում են երեքնուկի ծաղկափթույթյունները, տաքացնում են 60-70 աստիճան և ապա սառեցնելուց հետո դնում են մեղվանոցում: Մեղուների տեսողությամբ և հոտառությամբ ինստիկտը վարժվում է երեքնուկի ծաղիկի գույնին ու հոտին, որից հետո մասսայաբար սկսում են այցելել շրջապատի երեքնուկի դաշտերը:

Այդ կապակցությամբ դեռևս 1937 թվին Մարտոս-
նու շրջանի վերին Ղարանլու գյուղում մեղուներին
վարժեցնելու վերաբերյալ կատարեցին հետևյալ դիտո-
ղությունները: Այդ գյուղի մեղվանոցը, որը կազմված
էր բավականին մեծ քանակությամբ մեղվի ընտանիք-
ներից, գտնվում էր կորնգանի մի փոքրիկ (200 ք. մ.
տարածությամբ) դաշտի կողքին, որը ցանվել էր նա-
խորդ՝ 1936 թվին: Մեղվանոցից որոշ տարածության
վրա (400 մետր, 700 մետր և այլն) գտնվում էին կորն-
գանի այլ դաշտեր: Բոլոր այդ դաշտերը, որոնց թվում
և մեղվանոցի մոտ գտնվող դաշտի կորնգանները 1937
թվին ծաղկեցին միաժամանակ: Մեղվանոցի մոտ գտն-
վող կորնգանի դաշտում մեղուների թիվը վերին առ-
տիճանի շատ էր, մինչդեռ 400—700 մետրի վրա գտնվող
կորնգանի հիմնական սերմադաշտերում մեղուների նույն-
խիսկ հետք չկար: Բավականին մեծ դժվարությամբ հա-
մոզեցինք մեղվապահին այդ փոքրիկ դաշտը հնձելու:
Հնձելուց հետո մեղուները նույն քանակով դեռևս շա-
րունակում էին այցելել կորնգանի հնձված բույսերի
ծաղիկներին: Սակայն, երբ կորնգանի հնձված խոտը հե-
ռացվեց այդտեղից, կորնգանի այն սերմադաշտերում,
որոնք գտնվում էին 400, 700 մետր հեռավորության
վրա, որտեղ ոչ մի մեղու մինչ այդ չկար, սկսվեց մե-
ղուների մի չտեսնված աշխուժություն: Երկու տարբեր
հեռավորության վրա գտնվող դաշտերում մեղուների քա-
նակը գրեթե միևնույն էր: Ի՞նչ կատարվեց այստեղ: Մեզ
թվում է կատարվեց մեղուների վարժեցում դեպի կորն-
գանի ծաղիկի գույնը, նրա հոտը, նրա նեկտարը:

Մեղուների ինտենսիվ գործունեությունը այդ եր-
կու դաշտերում էլ շարունակվեց մինչև այդ կորնգան-

ների ծաղկման վերջը և ստացվեց հեկտարից 13,7 ցենտներ սերմ:

Մարտոկնու 2րջանում կատարված այս փորձը կրկնեցինք 1938 թ. Սիսիանի 2րջանի Բնունիս գյուղում և 1939 թ. Թալինի 2րջանի Ագարակ գյուղում: Երկու վայրերում էլ մեղուները փոխադրեցինք մոտիկ կորնզանի դաշտը, սրը դեռ նոր էր սկսել ծաղկել: Երեք օրից հետո, երբ մեղվանոցի կողքի այդ դաշտը ծաղկել էր և մեղուներն էլ մասսայական կերպով հաճախում էին այդ դաշտի կորնզանի ծաղիկներին, նրանցից ոչ շատ հոռու 600—800 մեաբի վրա գանվող կորնզանի դաշտում մեղուների աննշան թռիչք էր նկատվում:

Մեղվանոցի կողքի դաշտի կորնզանը հնձելուց անմիջապես հետո կորնզանի սերմադաշտերում մեղուների մասսայական թռիչք կատարվեց և արդյունքը եղավ այն, որ Բնունիսում ստացվեց հեկտարից 13,3 ցենտներ սերմ, իսկ Ագարակում 14,8 ցենտներ:

Այս փորձերից պետք է գալ այն եզրակացություն, որ

1. Մեղուներին կորնզանի ծաղկի դույնին, նրա հոտին ու հեկտարին վարժեցնելը բավականին մեծ արդյունք է տալիս:

2. Մեղուներին վարժեցնելու համար կարելի է հիմնական մեղվանոցի մոտ մի փոքրիկ հողակտոր կորնզան ցանել և վերջինս հնձել ծաղկելուց 2-3 օր հետո: Այս միջոցառումը կարելի է կիրառել միայն այն դեպքում, երբ կորնզանի սերմադաշտերն էլ մասավորապես նույն ժամանակին են ծաղկում կամ մի քիչ ուշ: Իսկ այն դեպքում, երբ կորնզանի սերմադաշտերը գտնվում են ավելի ցածրադիր վայրերում, քան մեղվանոցն է, և հետևապես ծաղկում են ավելի շուտ քան մեղվանոցի

մասի դաշտը, այս միջոցառումը էֆեկտ տալ չի կարող:

Վարժեցնել կարելի է նաև հետևյալ ձևով. մեղվա-
նոցը փոխադրել կորնզանի ցանքերից ուղիքի տեսակի-
տից ամենահարմար և ամենաշուտ ծաղկող դաշտը՝ կո-
րնզանի ծաղկելու նախօրյակին: Հենց որ այդ դաշտի
կորնզանները սկսեցին համատարած ծաղկել և դաշտում
մեղուների մասսայական թռիչք նկատվեց, այդ կորն-
զանները պետք է հնձվեն խոտի համար: Անհրաժեշտ է
լայն չափով կիրառել այս միջոցառումն արտադրության
պայմաններում:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ տարբեր
կլիմայական պայմաններում կորնզանի սերմարտադրո-
ղականությունը տարբեր է. չոր պայմաններում նա
բարձր է, խոնավ պայմաններում շատ ցածր է: Այսպես
օրինակ, Երևանում նա հավասար է $72,1^{\circ}/_{\circ}$ -ի, մինչդեռ
Կիրովականի բուսաբանական այգում $32,6^{\circ}/_{\circ}$ -ի: Մեկ ու-
րիշ օրինակ, Սիսիանի շրջանի Գարաբասի չոր պայմաննե-
րում սերմարտադրողականությունը հավասար է $70,2^{\circ}/_{\circ}$ -ի,
մինչդեռ նույն շրջանի Բաղարչայի խոնավ պայմաննե-
րում $39,6^{\circ}/_{\circ}$ -ի: Այս երևույթի բացատրությունը պետք
է կապել նաև մեղուների մասսայական թռիչքի հետ:

1938 թվին Կիրովականում կորնզանի մասսայական
ծաղկումը գուգաղիպեց արևոտ, տաք, համեմատաբար
չոր եղանակներին, որտեղ տեղի ունեցավ մեղուների
մասսայական թռիչք, և այդ տարի այդտեղ ցանված կո-
րնզանի բոլոր էկստրայերի սերմարտադրողականությունը
էլ հավասար էր $53-68,5^{\circ}/_{\circ}$ -ին: Իսկ 1939 թվին, մանա-
վանդ 1940 թվի խոնավ տարիներին, նույն պայմաննե-
րում, սերմարտադրողականությունը ինչպիսիք $22,2^{\circ}/_{\circ}$ -ի:
Այսպեղից դժվար չէ համոզվել, որ մեղուները խոնավ և

ցուրտ օրերին թուլիչք չեն դործում, կորնգանների ծաղիկներին չեն հաճախում և հետևապես փոշոտումը նման վայրերում լինում է թույլ: Ըստ երևույթին այդ նույն խոնավ ու ցուրտ պայմաններում կորնգանի ծաղիկները նեկտար թույլ են արտադրում, կամ չեն արտադրում:

Այս բոլորից պետք է դալ այն եզրակացության, որ կորնգանի սերմի բերքատվության բարձրացման խնդրում մեղուների կատարած աշխատանքը հսկայական նշանակություն ունի:

Ագրոտեխնիկական բոլոր միջոցառումները (ժամանակին ու որակով վարը, ցանքը, կանոնավոր խնամքը և այլն) չեն կարող կորնգանի սերմի բերքատվությունը բարձրացնել, եթե բացակայում են փոշոտիչները - կուլտուրական մեղուները, հետևապես կորնգանի սերմաբուծությունը և մեղվաբուծությունը միշտ պետք է խելացիորեն զուգակցել միմյանց:

Սովետական Միության առաջավոր շրջաններում և արտասահմանում մեղուներին վաղուց են օգտագործում որպես փոշոտիչներ՝ մի շարք խաչաձև փոշոտիող կուլտուրական բույսերի սերմի բերքատվության բարձրացման բնագավառում: Շատ տեղերում վաղուց են եկել այն եզրակացության, որ կուլտուրական մեղվից այդ ուղղությամբ ստացված եկամուտը ավելի մեծ է քան այն եկամուտը, որը ստացվում է մեղրից և մեղրամսից:

Սովետական Միության առաջավոր շրջանները մեղուներին որպես խաչաձև փոշոտիող կուլտուրաների փոշոտիչների օգտագործելը դարձրել են բարձր բերքի ագրոտեխնիկական կարևոր ձեռնարկումներից մեկը: Հայաստանում այդ չի կիրառվում. մինչդեռ ընդարձակվում է խոտաբույսերի սերմադաշտերի սարածությունները: Այժմ

խնդիր է դրվում պլանային կարգով այդ սերմադաշտերը ապահովել փոշոտիչներով-մեղուներով:

ՍՍՌ Միության Մինիստրների Սովետը նշում է. «Հանձնարարել կոլխոզներին և սովխոզներին՝ երեքնուկի և այլ մեղրատու խոտաբույսերի սերմերի բերքն ավելացնելու նպատակով միջոցներ ձեռք առնել մեղվանոցներ կազմակերպելու համար և կիրառել փեթակների փոխադրումը դեպի խոտաբույսերի սերմադաշտերը՝ նրանց ծաղկման ժամանակաշրջանում»:

Հետևապես անհրաժեշտ է որպեսզի խաչաձև փոշոտ-վող կուլտուրաների տարածություններն ընդարձակելու հետ զուգահեռ պլանային կարգով ավելացնել մեղվափեթակների թիվը: Որոշ շրջաններում՝ Սիսիան, Սևանի ավազան, Սխուրջան, Արթիկ և այլն գոյություն ունի մեծ ճեղքվածք կորնգանների սերմադաշտերի տարածության ընդարձակման և մեղուների ընտանիքների թվի աճման միջև: Այդ ճեղքվածքի բացասական ազդեցությունը մինչև հիմա քիչ էր զգացվում, որովհետև խոտադաշտային ցանքաշրջանառություն չէր կիրառվում, կորնգանը ցանվում էր գյուղից, մեղվանոցից մոտիկ հողակտորներում: Այժմ երբ ընդարձակվում են կորնգանի ցանքի տարածությունները և շատ հաճախ այդ ցանքերը, համաձայն կիրառվող խոտադաշտային ցանքաշրջանառության, պետք է ցանվեն գյուղից շատ հեռու, երբեմն 10 — 12 կիլոմետրի վրա՝ վտանգն աճում, հսկայական է դառնում: Մեր կոլխոզներում կորնգանի սերմադաշտից բարձր և կայուն բերք ստանալու և պահանջված քանակությամբ սերմ ունենալու կարևոր խնդիրը ճիշտ լուծելու համար, անհրաժեշտ է կորնգանի սերմադաշտերի ծաղկելու մոմենտին լուրաքանչյուր հեկտարն ապահովել մեղուների 20 ընտանիքով: Անհրաժեշտ է, որպեսզի այդ

միջոցառումը դառնա կոլխոզների համար պարտադիր միջոցառում: Անհրաժեշտ է մեղվաբուծությունն ավելի արագ թափով զարգացնել, նրան տալ ճկունություն, տրնտեսության մի զոնայից մյուսը ժամանակին փոխադրել: Պետք է մեղվաբուծությունից ստացված մեզրի և մոմի եկամուտն ընդունել ոչ թե ինքնապատակ, այլ որպես մեկ հեկտար խաչածե փոշոտվող կուլտուրայի ինքնարժեքն իջեցնող միջոցառում:

ԿՈՐՆԳԱՆԻ ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐՄԻ ԲԵՐՔԻ ՎՐԱ.

Կորնգանը շատ հաճախ վարակվում է սնկային հիվանդություններով: Այդ հիվանդություններն ինչպես նախալեռնային շրջաններում, այնպես էլ լեռնային շրջաններում խիստ կերպով անդրադառնում են կորնգանի սերմարտադրողականության վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ վայրերում հիվանդություններով վարակված կորնգանների սերմարտադրողականությունը շատ ցածր է լինում և շատ հաճախ հավասար է լինում 20-25% -ի: Այդ հետևանք է այն բանի, որ վարակվելու դեպքում բույսերի տերևներն հիմնական մասը թափվում կամ սեանում է: Վարակված բույսերը զրկվելով տերևների հիմնական մասից, ի վիճակի չեն սննդանյութերով ապահովելու ծաղկման ու փոշոտման պրոցեսին, որի հետևանքով էլ տեղի է ունենում ծաղկավիժում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույն պայմաններում, միևնույն քանակությամբ առողջ բույսերից կրկնակի անգամ, երբեմն էլ քառակի և նույնիսկ

ավելի անգամ շատ սերմ է ստացվում քան հիվանդություններով վարակված նույն քանակությամբ բույսերից: Առողջ բույսերից ստացված սերմերի հետ համեմատած հիվանդ բույսերի սերմերը չմշկված ու մանր են լինում: Հիվանդություններով վարակված բույսերից ըստացված սերմերի որակը շատ ցածր է լինում (տես աղյուսակ № 17):

Աղյուսակ № 17

Հիվանդություններով վարակված կոնցանի սերմադասերից ստացված սերմացվի որակական հատկանիշներ

№ №	Սերմերն ինչպիսի բույսերից է ստացվել	Սերմակույթ.	Սերման էներգ.	Ցանքի տառչին տարում		
				1 ք. մ. բույսի թիվը	Բույսերի զարգացման առօրինակներ	Վարակվածութ. աստիճանը
1	Առողջ բույսերից	83,7	6—8 օր	211	Ցող հասնում է նա ծաղիկ	Առողջ
2	Ասկոխիտայով վարակված բույսերից	42,3	12—17	94	3—4 տերև	25—50 %
3	Միլդիացողով վարակված բույսերից	41,9	10—18	82	3—4 տերև	25—50 %

Թվերը ցույց են տալիս՝ որ առողջ բույսերի հետ համեմատած հիվանդ բույսերից ստացված սերմերն ունեն շատ ցածր ծլունակություն, ծլման էներգիայի տեսակետից աարբերությունը մեծ է. առողջ բույսերից ստացված սերմերը ծլում են 6—8 օրում, մինչդեռ հիվանդ բույսերից ստացված սերմերը՝ 10—18 օրում:

Նույն նորմայի ցանքի դեպքում ստացվում է տարբեր խտություն ունեցող ցանք, օրինակ՝ առողջ սերմերի

դեպքում մեկ քառակուսի մետրում բույսերի թիվը հա-
վասար է 211-ի, մինչդեռ ալյուրացողով վարակված
դաշտերից ստացված սերմը ցանելու դեպքում ստացվում
է 82 բույս: Յանքի առաջին տարվա հուլիսի 15-ին կա-
տարած դիտողություններից պարզվում է, որ միևնույն
պայմաններում և միաժամանակ ցանված կորնզանները
զարգացման տարբեր աստիճանում էին գտնվում, օրինակ՝
այն դեպքում, երբ որպես սերմացու ցանել էինք առողջ
բույսերից ստացած սերմ, բույսերը ցողուններ էին աճել
և նույնիսկ հատ ու կենտ ծաղիկել, իսկ այն դեպքում,
երբ որպես սերմացու ցանել էինք հիվանդ բույսերից
ստացված սերմ, բույսերը շատ թույլ էին, վախժ, փայն
2-3 տերևների ստադիայում: Օգոստոսի մեկին կատարած
հաշվառումներից պարզվեց՝ որ այն մարգերում, որտեղ
ցանվել էին առողջ բույսերից ստացված սերմերը՝ բույ-
սերն էլ միանգամայն առողջ էին, իսկ այն մարգերում,
որտեղ ցանվել էին հիվանդ բույսերից ստացված սերմեր,
ցանքի առաջին իսկ տարում խիստ վարակված էին՝ մի
մարգում ասիոխիտայով, մյուս մարգում ալյուրացողով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սըն-
կային հիվանդություններով վարակվածության աստի-
ճանը ցանքի տարբեր տարիներում տարբեր է: Ընդհան-
րապես, երիտասարդ կորնզանները ավելի քիչ են վա-
րակվում քան «ծերացած» բույսերը: Վարակվածության
աստիճանը կախված է նախորդ տարիների և հարերի
ժամանակից և բարձրությունից: Եթե առաջին հարը կա-
տարվում է կոկոն վիճակում, ապա հաջորդ հարերի և
հաջորդ տարիների բերքի վարակվածության աստիճանը
թույլ է լինում: Որքան հարը կատարվում է ցածրից,
այնքանով էլ հաջորդ հարերի և տարիների վարակվա-
ծությունը թույլ է լինում: Բոլոր այն դաշտերում, երբ

կորնգանի ցանքը վարակված է մոլախոտերով, կորնգանի բույսերի հիվանդութուններով վարակվածության աստիճանը բարձր է լինում: Այն դաշտերը, որտեղ բույսերը վարակված են սնկային այս կամ այն հիվանդությամբ, ոչ մի դեպքում չի կարելի թողնել սերմի համար և անհրաժեշտ է դեռևս կոկոն պիճակում հնձել խոտի համար:

ԵՐԲ ՀԱՎԱՔԵԼ ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՄԸ

Կորնգանի սերմաբուծության գործում խոշոր նշանակութիւն ունի սերմի հավաքի ժամկետի ճիշտ որոշումը: Բանն այն է, որ կորնգանի սերմերը միաժամանակ չեն հասունանում. երբ ներքևի սերմերը հասունացել են, վերևի սերմերը դեռ խակ են: Սպասել որ բոլորը լըիվ հասունանան ու նոր հավաքել անհնարին է, որովհետեւ ներքևի հասունացած սերմերը թափվում են և տեղիք տալիս խոշոր կորուստներին: Թե երբ հավաքել կորնգանի սերմը այդ մասին շատ տարաձայնութիւններ կային: Հետադոտողներից ոմանք խորհուրդ էին տալիս կորնգանի սերմերը հավաքել այն ժամանակ, երբ ողկույղի վրայ դանվող սերմերի 50%-ը գորշացել, հասունացել է:

Ձնայած նրան, որ բոլորն էլ արձանագրում են կորնգանի սերմերի ուժեղ թափվելու հանգամանքը, սակայն միշտ էլ անցնում են այդ կարևորագույն փաստի կողքով, առաջարկելով բերքահավաքը կազմակերպել առավոտյան ժամին:

Բոլորին հայտնի է, որ երբ կորնգանի սերմերը հավաքվում է սյուղների 50%-ի հասունացման ժամանակ, այդ դեպքում տեղի է ունենում բավականին մեծ կորուստ, ներքևի հասունացած սերմերը քամուց, քաղող

մեքենայի կամ զործիքի հարվածից կամ փոխադրելիս
թափվում են: Մեր ուսումնասիրություններից պարզվել
է, որ միայն դաշտում տեղի է ունենում հետևյալ չտփի
կորուստը. այսպես օրինակ՝ Գետաթաղ գյուղում մեկ
հեկտարից դաշտում թափվել էր 4,3 ցենտներ, Փանտան
գյուղում՝ 3,7 ցենտներ, Գյոզալդարայում 4,7 ցենտներ
և այլն: Նույն գյուղերում ավելի մեծ կորուստ տեղի է
ունենում փոխադրելու ժամանակ, որի հաշվելը բավա-
կանին դժվար է:

Պարզվել է, որ կորնգանի սերմերը հնձից հետո դեռ-
ևս շարունակում են իրենց ֆիզիոլոգիական հասունա-
ցումը՝ խրձում, կալում, պահեստում: Այս երևույթը հը-
նարավորություն է տալիս կորնգանի սերմի բերքահա-
վաքը կատարել մի քիչ ավելի շուտ, որով կկանգվի
հասունացած սերմերի թափվելը, դրանով կբարձրացվի
սերմի բերքատվությունը: Շուտ հավաքելու դեպքում
սերմի որակը չի նվազում:

Ահա այդ պատճառով էլ նպատակահարմար է կորն-
գանի սերմը հավաքել այն ժամանակ, երբ ունդերը մուգ
կանաչ գույնից փոխվում են բաց կանաչ գույնի, ուն-
դի մեջ սերմերն լրիվ ձևակերպվել են և հնարավոր է
լինում ողկույզի ծալքի մասի սերմերը ունդերից անջա-
տել և երբ ներքևի երկու կամ երեք ունդերը զորշ գույն
են ստացել, այսինքն հասունացել են:

Կորնգանի սերմը շուտ հավաքելով, այսինքն այն
ժամանակ, երբ ողկույզի հիմքի մասում ունդերից միայն
երկուսը կամ երեքը զորշացել, հասունացել են, նրա որակը
չիջեցնելով հանդերձ, հնարավոր է լավագույն կերպով
պայքարել սերմի կորուստների դեմ:

Սերմի հավաքը շուտ կազմակերպելու դեպքում բար-
ձրը է լինում նաև ստացված դարմանի կերային արժեքը:

որովհետեւ տերեւները զգալի մասը ջուտ հավաքելու դեպքում չի թափվում, ցողունները համեմատաբար ավելի նուրբ են լինում, քան ուշ հավաքելու դեպքում: Երբ ցողունները զրկված են լինում տերեւներից, նրանք ամբողջութեամբ փայտանում են: Կորնգանի սերմերի հասունացումը շատ արագ թափով է տեղի ունենում: Այս բանը սկստի ունենալով անհրաժեշտ է կոխոզներում աշխատանքը կազմակերպել այնպես, որ շատ կարճ ժամանակամիջոցում՝ 2-3 օրվա ընթացքում հավաքել կորնգանի սերմացուն, այլապես տեղի կունենա սերմի մեծ կորուստ: Բերքահավաքը հնարավոր է կատարել թե ձիռքի միջոցով և թե կոմբայնով: Ձեռքի միջոցով հնձելիս, փոքրիկ խրճեր պետք է կապել և նույն օրը զգուշութեամբ փոխադրել կալսիլու վայրը:

Կալում այդ փոքրիկ խրճերը պետք է դասավորել այնպես, որ որբան կարելի է կարճ ժամանակամիջոցում չորանան: Բավականին շատ կորուստներ լինում են նաև կալսման ժամանակ: Մի շարք կոխոզներում բերքահավաքը կատարելուց հետո ստացված մասսան կալսման վայրում դեզ են դնում և միայն աշնանը կալսում: Այդպիսի դեպքում միշտ էլ ստացվում է ավելի քիչ բերք, որովհետեւ տեղի են ունենում բավականին մեծ կորուստներ:

Թալինի շրջանում բերքահավաքը կատարելուց հետո փոքրիկ խրճերը զգուշութեամբ փոխադրում են կալսելու վայրը: Խուրճ վիճակում լավ չորացնելուց հետո, առանց խուրճը բացելու փայտով մեկ-երկու հարված են տալիս նրա վերևի մասին, որից սերմերն ամբողջութեամբ թափվում են: Կալսման այս եղանակը կիրառելով աշխատանքը վերին աստիճանի հեշտանում է, իսկ կորուստը մինիմումի է հասնում, խրճերն էլ չըբացելու

հետևանքով տերեւները չեն թափվում և որպէս կեր ա-
վելի սննդարար են լինում, քան կալսելուց հետո ստաց-
ված դարմանը: Կալսումը կարելի է և պետք է կատա-
րել նաև կալսիչ մեքենաների միջոցով:



	52
1. Ներածութիւն	3
2. Բույսերի սնման մակերեսի աղդեցութիւնը կորնզանի սերմի բերքատւութիւն վրա	7
3. Ծածկոցի աղդեցութիւնը կորնզանի սերմի բերքատւութիւն վրա	18
4. Ծածկոց հանդիսացող կուլտուրայի ցանքի խտութիւն աղդեցութիւնը ենթացաւ կորնզանի սերմի բերքի վրա	23
5. Կորնզանի ցանքի խտութիւն (նորմայի) աղդեցութիւնը սերմի բերքատւութիւն վրա	25
6 Որ տարիանից կորնզանի դաշտը կարելի է թողնել սերմի համար	32
7. Որ հարը թողնել սերմի համար	41
8. Մեկ տարում բազմահար կորնզանի դաշտից երկու անգամ սերմ ստանալու հնարավորութիւնը	45
9. Բաղմահար կորնզանի փոշոտումը	47
10. Կորնզանի հիվանդութիւնների աղդեցութիւնը սերմի բերքի վրա	60
11. Երբ հավաքել կորնզանի սերմը	63

Պատ. խմբագիր՝
Բ. Մ. ԳԱՐԱՍՅԱՆՐՅԱՆ

ՎՖ 00505 Պատվեր № 538. Տիրաժ 2000. Տպ 4,3 մամ., հեղ. 2,3 մամ.
Ստորագրված է տպագրության 1947 թ.

ՀՍՍՐ Թիֆլիսյան Սովետին կից Պոլիկրաֆ. և Հրատ. Վարչության
№ 1 տպարան, Երևան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008727

- 9829

ԳԻՆԸ Յ Ռ.

A $\frac{\text{II}}{18287}$